

ՄԵՐ ԱՆԿԻՒՆԷՆ

Հայաստանը ՉԷ Որ Կը Հեռանայ Ռուսաստանէն՝ Այլ Հակառակը

Ռուսաստանի քաղաքական շրջանակները կը շարունակեն ամենօրեայ հերթականութեամբ դժգոհութիւն յայտնել ու զգուշացնել Երեւանի վարած արտաքին քաղաքականութեան նկատմամբ, որ բացառապէս կը ձգտի ապահովելու երկրի անվտանգութիւնն ու սահմաններու անձեռնմխելութիւնը՝ Ատրպէյճանի ամենօրեայ սպառնալիքներուն դէմ:

«Հայաստանը կը դառնայ աշխարհաքաղաքական խաղարկման առարկայ ԱՄՆ-ի եւ արեւմուտքի կողմէ», ըսած է Ռուսաստանի Ռաշնային Խորհուրդի միջազգային յարաբերութիւններու հարցերով կոմիտէի նախագահ Կրիկորի Քարասին:

«Հայաստանը կը վերածեն արեւմուտքի վտանգաւոր ծրագրերու իրագործման գործիքի», յայտարարած է Ջախարովա:

«Հայաստանի մէջ 102-րդ ռազմակայանի առկայութիւնը Հայաստանի ինքնիշխանութեան միակ իրական երաշխիքն է», յայտնած են Ռուսաստանի Արտաքին գործոց Նախարարութեան աղբիւրները:

Իսկ ամենէն զարմանալիւն Լաւրովի այն յայտարարութիւնն է, ուր ան կ'ըսէ, թէ ընդդիմութիւն եղած ժամանակ Նիկոլ Փաշինեան կը ղեկավարէր «Ելք» կարգախօսով շարժումը՝ ուղղուած Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի Կազմակերպութեան (ՀԱՊԿ) եւ Եւրասիական Տնտեսական Միութեան (ԵԱՏՄ) Հայաստանի դուրս գալուն: Ռուսաստանի փորձառու դիւանագետի միտքերու այս շարադրանքը դժուար է վերագրել անոր անտեղեակ ըլլալուն: Ան պարզապէս կը փորձէ մոլորեցնել հանրային կարծիքը: «Ալք» դաշինքը, որուն, Փաշինեանի կողքին մաս կը կազմէին «Հանրապետութիւն» կուսակցութեան առաջնորդ Արամ Սարգսեանը եւ «Լուսաւոր Հայաստան» կուսակցութեան ղեկավար Էտնոն Մարութեանը, ընտրական դաշինք մըն էր, որ Հայաստանի ժողովուրդին կ'առաջարկէր ելք՝ երկրին մէջ տիրող այդ ժամանակուայ տխուր իրավիճակէն:

Թաւշեայ յեղափոխութեան յաղթանակէն անմիջապէս ետք, Փաշինեան հրապարակաւ յայտարարեց, որ Հայաստանի արտաքին քաղաքական ուղղութեան մէջ փոփոխութիւն տեղի պիտի չունենայ:

Ատրպէյճանը Կը Փորձէ Գտնել Պատրուակներ՝ Նոր, Լայնամասշտաբ Պատերազմի Համար. Փաշինեան

Ատրպէյճանը կը փորձէ գտնել պատրուակներ՝ տարածաշրջանին մէջ նոր, լայնամասշտաբ պատերազմ մեկնարկելու համար, Արտաշատի մէջ իր կուսակիցներուն հետ հանդիպման ժամանակ ըսած է վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

Վարչապետը շեշտած է, որ խաղաղութեան ձգտումներու եւ օրակարգի առիթով Հայաստանի իշխանութիւններուն շատ կը հայհոյեն, ապա սուտ որակած է լուրերը, թէ իր ղեկավարած կառավարութիւնը կը պատրաստուի Տաուշի մարզի 4 գիւղեր յանձնելու Ատրպէյճանին: Վարչապետը եւս մէկ անգամ յայտնած է՝ Հայաստանի Հանրապետութեան մէջ երբեք չեն եղած կրկն Հաճիլի (Ղրղըլհաճիլի), Խէյրիմլի, Աշաղա Ասկիպարա, Բաղանիս Այրուս անունով գիւղերը, ընդգծելով, որ Երեւանը յաւակնութիւններ չունի նշուած գիւղերու տարածքներուն վրայ:

«Սա պէտք է շատ յստակ արձանագրել, առաւել եւս այն պայմաններում, երբ մեզ համար ակնյայտ է, որ Ատրպէյճանը փորձում է գտնել, կամ առնուազն մեր



Նիկոլ Փաշինեան Արտաշատի մէջ իր կուսակիցներուն հետ հանդիպման ժամանակ

զնահատականն է այդպիսին, որ Ատրպէյճանը փորձում է գտնել պատրուակներ, տարածաշրջանում նոր, լայնամասշտաբ պատերազմ մեկնարկելու համար:

«Մեր քաղաքական դիրքորոշումը, ուղերձն այն է, որ Հայաստանն ընդհանրապէս իր միջազգայնօրէն ճանաչուած, ինքնիշխան

տարածքից դուրս որեւէ յաւակնութիւն չունի, ներառեալ նշուած՝ Ատրպէյճանի կողմից յիշատակուող գիւղերի տարածքների վրայ, ընդ որում, ուզում են իմանաք, որ կրկն Հաճիլի գիւղը 100 տոկոսով

Կարօ Փայլան Եւ Քատիր Աքին Ներկայ Պիտի Գտնուին «RED» Ֆիլմի Ցուցադրութեան

«Մասիս» հրատարակչական կազմակերպութեամբ Հինգշաբթի, 18 Ապրիլ 2024-ին, երեկոյեան ժամը 8:00-ին, ՀԲԸՄ Փաստփոխի վաչէ եւ թամար Մանուկեան Մշակութային կեդրոնին ներս տեղի պիտի ունենայ թուրք մտաւորական՝ Քատիր Աքինի պատրաստած «RED» վաւերագրական ժապաւէնի Ամերիկայի մէջ անդրանիկ ցուցադրութիւնը:

Ֆիլմը պատրաստուած է «Հայ Յեղափոխական Փարամազ. Հայ Սոցիալիստները Եւ Յեղասպանութիւնը Ապտուլհամիտին մինչեւ Իթիթէրաթի» բեկումնային գրքի հիման վրայ, որուն հեղինակն է Քատիր Աքինը: Ֆիլմը կը խորանայ արդարութեան եւ հաւատարմութեան խոր թեմաներու մէջ՝ ուսումնասիրելով հայ յեղափոխականներու բարդ պատմութիւնն ու պայքարը Հայոց ցեղասպանութեան շրջանին:

Ցուցադրութեան պիտի յաջորդէ Քատիր Աքինի եւ Թուրքիոյ խորհրդարանի նախկին պատգամաւոր Կարօ Փայլանի հետ հարց

ու պատասխան: Այս քննարկումը եզակի առիթ պիտի ըլլայ խորանալու ֆիլմի արտադրութեան, տարածաշրջանային գաղափարախօսութեան ու անոր եղափոխութեան եւ աշխարհաքաղաքական ընթացիկ հարցերուն մէջ:

Ֆիլմի ցուցադրութեան մուտքը ազատ է, սակայն տեղերը սահմանափակ ըլլալով կը խնդրուի info@massispost.com հասցէով նախօրոք ապահովել տեղերը:

ՀԲԸՄ վաչէ եւ թամար Մանուկեան Մշակութային կեդրոնի հասցէն է՝ 2495 E Mountain St, Pasadena, CA 91104:

«Խաղաղութեան Գործընթացը Հանդիպման Հիմնական Թեման Պիտի Չըլլայ». Միլլըր՝ Հայաստան- ԱՄՆ-ԵՄ Հանդիպման Մասին

ԱՄՆ վարչակազմը Հայաստանին եւ Ատրպէյճանին կոչ կ'ընէ գերծ մնալու յարձակողական հետտորաբանութենէն եւ գործողութիւններէն, որոնք կրնան յանգեցնել իրավիճակի սրման, ճեպազրոյցի ժամանակ յայտնած է Պետական Քարտուղարութեան խօսնակ Մեթիու Միլլըր:

«Մենք կը շարունակենք զգուշանալ հետտորաբանութենէն, որ կրնայ յանգեցնել սահմանին մագլցողութեան եւ ռազմական գործողութիւններու», ըսած է Միլլըր՝ մեկնաբանելով երկու երկիրներուն միջեւ սահմանային իրավիճակը:

Ան յաւելած է, որ ԱՄՆ պիտի շարունակէ տարածաշրջանին մէջ արդար եւ արժանապատիւ խաղաղութեան համար պայմաններ ստեղծելու կոչեր ընել, ուր կը յարգուին բոլորին իրաւունքները:

Միլլըր նաեւ նշած է, որ Ապրիլ 5-ին Պրիւքսէյլի մէջ կայանալիք Հայաստան-ԱՄՆ-ԵՄ հան-

ԼՈՒՐԵՐ

Ռուսաստանի Յետ Նոյն Լեզուով Չենք Խօսիր, Առկայ Խնդիրները Անհնար Է Թաքցնել. Արարատ Միրզոյեան



Արարատ Միրզոյեանի հարցազրույցը Արժանքինեան «Todos Noticias» հեռուստատեսութեան եթերով

Այսօր մենք Ռուսաստանի հետ նոյն լեզուով չենք խօսիր. այն խնդիրները, որոնք կան Ռուսաստանի հետ յարաբերութիւններուն մէջ, անհնար է թաքցնել: Այս մասին արժանաւորեալ «Todos Noticias» հեռուստատեսութեան եթերով ըսած է ՀՀ արտաքին գործերու նախարար Արարատ Միրզոյեանը:

Լրագրողը նկատած է, որ վերջին տարիներուն կը թուի, թէ Հայաստանը շրջադարձ կատարած է դէպի Արեւմուտք, ապա ան հետաքրքրուած է՝ արդեօք Հայաստանը չի՞ վախճար դաշնակից համարուող Ռուսաստանի պատասխանէն:

«Մենք ժողովրդավարական երկիր ենք եւ ցանկանում ենք ամրապնդել ժողովրդավարական հիմնարկները: Մենք տեսնում ենք, որ, օրինակ, Միացեալ Նահանգները եւ Եւրոմիութիւնը (ԵՄ) հիմնական գործընկերներն են: Մենք նաեւ տեսնում ենք, որ ԵՄ-ն պատրաստ էր քաղաքացիական առաքելութիւն ուղարկել, եւ սահմանին իրավիճակը զգալիօրէն բարելաւուեց: Նրանց ներկայութիւնը մեծապէս նպաստում է տարածաշրջանի եւ Հայաստանի մի մասի խաղաղութեանը: Ռուսաստանը խաղաղապահներ էր ուղարկել 2020 թուականին՝ Լեռնային Ղարաբաղում անվտանգութեան վերահսկման համար, սակայն մենք ակնառես եղանք բազմաթիւ յարձակումների Հայաստանի սահմանի վրայ: Չենք կարող ասել, որ գոհացուցիչ արձագանգ ենք ստացել մեր դաշնակիցներից: Այսպիսով, անվտանգութեան այն մեխանիզմները, որոնք մենք ունէինք մի քանի տասնամեակ շարունակ, չաշխատեցին: Այդ իսկ պատճառով մենք

խնդրեցինք, որ Եւրոմիութիւնը գայ ու մշտադիտարկի իրավիճակը: Այժմ մենք խորացնում ենք տնտեսական եւ քաղաքական յարաբերութիւնները Պրիւքսէլի եւ Ուաշինկթընի հետ: Ես դա շրջադարձ չէի անուանի, մենք փորձում ենք ապահովել մեր անվտանգութիւնն ու զարգացումը ժողովրդավարական ճանապարհով եւ հիմնարկներով, եւ դրա համար տեսնում ենք, որ լաւ գործընկերներ կան Արեւմուտքում», ըսած է ան:

Խօսելով այս առումով Ռուսաստանի հետ յարաբերութիւններու վիճակին մասին՝ Միրզոյեան նկատած է, որ երեւանն ու Մոսկուան ունին տնտեսական յարաբերութիւններ, երկրորդ առեւտուր, համագործակցութեան տարբեր ոլորտներ եւ լաւ կապեր անվտանգութեան առումով:

«Բայց ճիշդ է նաեւ, որ այսօր մենք նոյն մտքերը չունենք եւ, պարզ ասած, նոյն լեզուով չենք խօսում: Այն խնդիրները, որոնք կան Ռուսաստանի հետ յարաբերութիւններում, անհնար է թաքցնել», ըսած է ղիւսնապէտը:

Անդրադառնալով Ռուսաստանի հետ դիւանագիտական յարաբերութիւններու խզման հաւանականութեան՝ արտաքին գործերու նախարարը ըսած է. «Ես չեմ կարող կանխատեսել ապագան, բայց գիտեմ, որ Հայաստանն արդար ակնկալիքներ ունի, որպէսզի երկու երկրի կողմից ստանձնած տարածաշրջանի անվտանգութեանն ուղղուած յանձնառութիւնն արտացոլի դրաւոր փաստաթղթում: Մեր ակնկալիքն այն է, որ Հայաստանի ու Ռուսաստանի այդ պարտաւորութիւնները կատարուեն»:

Հայաստանի Ռուսերը Կ'ահագանգեն՝ Իրենց Կը Յետեւին Ռուսական Համագգեստով Անձեր

Ահագանգեր երեւանի ու Կիւմրիի մէջ բնակող ռուսերէն. հայաստանեան իրաւապաշտպան կազմակերպութեան դիմած քաղաքացիները պատմած են, որ իրենց կը հետեւին Ռուսաստանի Դաշնութեան զինուորական համագգեստով անձեր:

Հելսինքեան քաղաքացիական վեհաժողովի վանաձորի գրասենեակի ղեկավար Արթուր Սաքունցը կ'ըսէ՝ Ռուսաստանի Դաշնութեան

այլախոհ կամ աքթիվիսթ քաղաքացիները պատմած են, որ յաճախ կասկածելի անձեր կը նկատեն իրենց բնակութեան վայրերուն մօտ տարածքներուն մէջ, կը տեղեկանան, որ հարցուփորձ ըրած են իրենց մասին: Իրաւապաշտպաններուն դիմած քաղաքացիները անվտանգութեան նկատառումներով դեռ չեն ուզեր բացայայտել իրենց ինքնութիւնը:

Օրերս տարածած յայտարարութեան մէջ ՀԲԱ վանաձորի

«Կայուն Հայաստան Կը Նշանակէ Կայուն Հարաւային Կովկաս». Սթանօ

ԵՄ արտաքին գործերու եւ անվտանգութեան քաղաքականութեան հարցերով մամուլի քարտուղար Փիթըր Սթանօն հերքած է Պաքուի պնդումները ԵՄ-ԱՄՆ-Հայաստան եռակողմ հանդիպման վերաբերել: Պատասխանելով ատրպէյճանական լրատուամիջոցներու հարցերուն՝ ան «ոչ-ճշգրիտ» անուանած է Ապրիլ 5-ին կայանալիք հանդիպման բնոյթի մասին տեղեկատուութիւնը:

«Ճիշդ չէ, որ հանդիպումը նուիրուած պիտի ըլլայ «անվտանգութեան երաշխիքներուն»: Այն պիտի չըջափէ այլ հարցեր՝ բացի ԵՄ/ԱՄՆ-Հայաստան երկկողմ յարաբերութիւններէն: Այսինքն՝ Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ յարաբերութիւններու կարգաւորման եւ խաղաղ բանակցութիւններու հարցեր պիտի չքննարկուելուին: Հիմնական շեշտը պիտի դրուի Հայաստանի տնտեսութեան կայունութեան եւ այս երկրին հետ երկկողմ համագործակցութեան վրայ», ըսած է ան: ԵՄ եւ ԱՄՆ կը կիսեն Հայաստանի եւ տարածաշրջանի կայուն, խաղաղ, անվտանգ եւ բարգաւաճ ապագային աջակցելու յանձնառութիւնը:

«Սա հնարաւորութիւն պիտի ըլլայ քննարկելու Հայաստանի հետ համագործակցութեան խորացումը՝ անոր տնտեսութիւնը ամրապնդելու նպատակով, հիմն-



ԵՄ արտաքին գործերու եւ անվտանգութեան քաղաքականութեան հարցերով մամուլի քարտուղար Փիթըր Սթանօ

ուած ԵՄ-Հայաստան երկկողմ գործընկերութեան վրայ: Կայուն Հայաստան կը նշանակէ կայուն Հարաւային Կովկաս: Մեր ջանքերը ուղղուած են ոչ թէ ունէ մէկուն դէմ, այլ ամբողջ տարածաշրջանին եւ անոր կայունութեան շահերուն», ըսած է Սթանօն: Անկէ առաջ Պաքուի բնութագրումները հերքած էր նաեւ պաշտօնական Ուաշինկթընը:

ՀՀ Ղեկավարութիւնը Կ'արտայայտէ Գաղափարներ, Որոնցմով Փաշինեան Ձեւաւորեց Իր «Ելք» Շարժումը. Լաւրով

Ռուսաստանի արտաքին գործերու նախարար Սերկէյ Լաւրով «Իզվեսթիա»-ին տուած հարցազրույցին կիսուած է Հայաստանի ներկայիս վարչապետ Նիկոլ Փաշինեանի քաղաքական դիրքորոշման փոփոխութեան վերաբերել իր դիտարկումներով՝ անոր ընդդիմադիր գործունէութեան մինչեւ երկրի կառավարման ներկայ շրջանը: Լաւրով չի շեղուցած է, որ ընդդիմութիւն եղած ժամանակ Նիկոլ Փաշինեան կը ղեկավարէր «Ելք» կարգախօսով շարժումը՝ ուղղուած Հաւաքական Անվտանգութեան Պայմանագրի կազմակերպութեան (ՀԱՊԿ) եւ Եւրասիական Տնտեսական Միութեան (ԵԱՏՄ) Հայաստանի դուրս գալուն: Այդ շարժումը, Լաւրովի խօսքով, կապեր ունէր Սորոսի հիմնադրամին հետ: Այդ կարգախօսով Փաշինեան կրցաւ զօրաշարժի ենթարկել բնակչութիւնը՝ մասնակցելու համար բողոքի ցուցերուն եւ պահանջելով վարչապետի ընտրութիւններ:

Այսօրուայ դրութեամբ, չնայած Հայաստանի եւ Ռուսաստանի միջեւ առկայ պատմական եւ բարեկամական կապերուն, հայաստանեան քաղաքական խօսուցիչին մէջ կը նկատուի տեղաշարժ դէպի Եւրոմիութեան հետ յարաբերութիւններու ամրապնդում,



Ռուսաստանի արտաքին գործերու նախարար Սերկէյ Լաւրով

ընդգծած է Ռուսաստանի արտաքին գործերու նախարարը: Իրերու այս վիճակը մտահոգութիւն կ'առաջացնէ Ռուսաստանի մէջ, քանի որ, Լաւրովի խօսքով, այն չի համապատասխաներ հայ ժողովուրդի շահերուն եւ ռուսահայկական յարաբերութիւններուն:

«Այսինքն՝ ըստ էութեան շրջանը կը փակուի, եւ Հայաստանի ղեկավարութիւնը կը սկսի արտայայտել այնպիսի գաղափարներ, որոնցմով Փաշինեանը ձեւաւորեց իր «Ելք» շարժումը», ըսած է Լաւրով:

գրասենեակը մտահոգութիւն չաշունտած է, որ ռուսական զինուորական համագգեստով իրաւապահ մարմիններու ներկայացուցիչները կ'օգտագործեն չհաշուառուած, հայ-

կական պետական համարանիշով մարդատար ինքնաշարժ, որ նախատեսուած է բացառապէս հետախուզական գործողութիւններ կատարելու համար:

Թուրքիոյ Մէջ Եւս Մէկ Հայկական Եկեղեցի Հանուած Է Վաճառքի



Հայկական եկեղեցիի պատին կը գետեղուի թրքերեն«ծախու է» պատարը

Թուրքիոյ Սիվաս (Սեբաստիա) նահանգին մէջ գտնուող հայկական Սուրբ Աստուածածին եկեղեցին հանուած է վաճառքի:

Կը նշուի, որ 1915-ի Հայոց Յեղասպանութենէն յետոյ լքուած եկեղեցին տեղաբնակ Հաթիճէ Աքայ անունով մէկուն սեփականութիւնը դարձած է, ով ալ, որոշելով վաճառել գայն, դիմած է անշարժ գոյքի գործակալութիւնը:

Անշարժ գոյքի գործակալն ալ թրքական «DHA» լրատուական գործակալութեան հետ գրոյցին յայտնած է, որ եկեղեցին վաճառելու հարցով խոչընդոտներ չկան:

«Կա՛յ սեփականութեան վկայական եւ չկան խոչընդոտներ

վաճառքի հարցով: Եկեղեցին առաջին աստիճանի պահպանող տարածք է եւ կը գտնուի պաշտպանութեան ներքոյ: Այսօրուրնէ ա՛յն հանած ենք վաճառքի եւ անոր դիմաց կ'ուզենք 16 միլիոն լիրա (շուրջ 500.000 տուրք):»

Նշենք, որ եկեղեցին կը գտնուի Կյոյստին գիւղին մէջ եւ կառուցուած է 19-րդ դարուն: Այն 2012-ին արձանագրուած է որպէս առաջին խումբի պահպանութիւն պահանջող մշակութային անշարժ գոյք:

Սրբատաշ քարերով կառուցուած հայկական եկեղեցիի ներքին եւ արտաքին պատերուն փորագրուած են խաչի պատկերներ:

Հայուհին Նշանակուած Է Պաղեստինի Արտաքին Գործերու Նախարար

Վարսեն Աղաբեկեանը նշանակուած է Պաղեստինի արտաքին գործերու եւ արտերկրի մէջ հայրենակիցներու հարցերով պետական նախարար: Այս մասին յայտնած է պաղեստինեան «Wafa» լրատուական գործակալութիւնը:

Գործակալութիւնը հրապարակած է նոր կառավարութեան ցուցակը, որ հաստատած է Պաղեստինի ինքնավարութեան ղեկավար Մահմուտ Ապպասը:

Մահմամատ Մուսթաֆան դարձած է արտաքին գործերու նախարար: Պաղեստինի մէջ պետական նախարարի պաշտօն զբաղեցնողը բարձրաստիճան պաշտօնեայ է, նախարարին ենթակայ, բայց այն նաեւ նախարարի կարգավիճակ ունի:

Նոր կառավարութիւնը աշ-



Վարսեն Աղաբեկեան՝ Պաղեստինի արտաքին գործերու նախարար խտտանքը պիտի սկսի Մարտ 31-էն:

ԱՄՆ Շարժական Հրահանգիչներու Խումբը Այցելած Է Հայաստան




Պաշտպանութեան ուղորտին մէջ ՀՀ-ԱՄՆ համագործակցութեան ծիրին մէջ, Ապրիլ 1-ին, ԱՄՆ շարժական հրահանգիչներու խումբը այցելած է Հայաստանի Հանրապետութիւն:

Պաշտպանութեան նախարարութեան վարչական համալիրին մէջ Ապրիլ 1-5 հրահանգիչները ՊՆ տեղեկատուութեան եւ հասարակացութեան հետ կապերու վար-

չութեան եւ «Զինուժ Մետիա» պետական հիմնարկի ծառայողներուն հետ պիտի կապուեն հանրային կապերու եւ հաղորդակցութեան ուղորտին մէջ փորձի փոխանակման վարժանքներ:

Ծրագրի մեկնարկին ընթացքին խօսքով հանդէս եկած է ՀՀ պաշտպանութեան նախարարի առաջին տեղակալ, ԶՈՒ ԳՇ պետ, գորավարէյթեան ի տուարա Ասրեանը:

Թուրքիոյ 35 Քաղաք Կ'անցնի Ընդդիմութեան Վերահսկողութեան Տակ



Թուրքիոյ Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովի նախագահ Ահմեթ Եներ յայտարարած է, որ երկրի քաղաքային ընտրութիւններուն մասնակցութիւնը կազմած է 78,11%, մշակուած է արձանագրութիւններուն 99,99%-ը: «Արձանագրութիւններուն 99,99 տոկոսի մշակումէն յետոյ ստացուած նախնական տուեալներուն համաձայն՝ մեթրոպոլիտներու քաղաքապետերու պաշտօններուն քուէարկութեան մասնակցութիւնը կազմած է 78,11 տոկոս: Ժողովրդահանրապետական կուսակցութիւնը յաղթած է 35 քաղաքներու մէջ, իշխող «Արդարութիւն եւ Զարգացում» կուսակցութիւնը՝ 24», տեղական հեռուստատալիքներու եթերով յայտնած է ԿԸՅ նախագահը:

Կիրակի Թուրքիոյ մէջ տեղի ունեցած են տեղական ինքնակա-

ռավարման մարմիններու ընտրութիւններ: Թուրքիոյ ընդդիմադիր ժողովրդահանրապետական կուսակցութիւնը 20 տարուան մէջ առաջին անգամ յաղթած է իշխող «Արդարութիւն եւ Զարգացում» կուսակցութեան: Բացի Սթամպուլէն, Անգարայէն եւ Անթալիայէն, որոնք կը կառավարուին 2019 թուականէն, ընդդիմութեան վերահսկողութեան տակ յայտնուած են նաեւ նոր քաղաքներ, այդ շարքին՝ Պուրսա եւ Թեքիրտաղ արդիւնաբերական կեդրոնները:

Ինչ կը վերաբերի 30 մեկապոլիտներուն, ապա անոնցմէ 14-ին մէջ քաղաքապետ կը դառնան Ժողովրդահանրապետական կուսակցութեան ընդդիմադիր անդամները: Եւս 10 քաղաքներ պիտի ղեկավարեն քրտամէտ DEM կուսակցութեան ներկայացուցիչները:

Հայաստանի Մէջ Արգելափակուած Են Սուլվիովի Հաղորդումները

«Հայաստանի հեռուստատեսային եւ ռատիօհաղորդիչ ցանց»-ը արգելափակած է «ՌԹՌ-Փլանեթ» հեռուստատալիքով հեռարձակուող «Երեկոն Վլատիմիր Սուլվիովի հետ» եւ «Կիրակի Երեկոն Վլատիմիր Սուլվիովի հետ» հեղինակային հաղորդումներու հեռարձակումը Հայաստանի Հանրապետութեան տարածքին: Այս մասին հաղորդագրութիւն տարածած է «Հայաստանի հեռուստատեսային եւ ռատիօհաղորդիչ ցանց»-ը:

«Հայաստանի հեռուստատեսային եւ ռատիօհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ն, հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետութեան կառավարութեան եւ Ռուսաստանի Դաշնութեան կառավարութեան միջեւ զանգուածային հեռահաղորդակցութեան ուղորտում համագործակցութեան մասին» համաձայնագրի 5-րդ եւ 6-րդ յօդուածները՝ Հեռուստատեսութեան եւ ռատիօյի յանձնաժողովի կողմից վերջին շրջանում արձանագրուած շարունակական խախտումների փաստը, արգելափակել է հանրային մուլ-



Ռուսական հեռատեսիլի հաղորդավար՝ Վլատիմիր Սուլվիով

թիվիլեքսով սփռուող «ՌԹՌ-Փլանեթ» հեռուստատալիքով հեռարձակուող «Երեկոն Վլատիմիր Սուլվիովի հետ» եւ «Կիրակի Երեկոն Վլատիմիր Սուլվիովի հետ» հեղինակային հաղորդումների հեռարձակումը Հայաստանի Հանրապետութեան տարածքում», ըսուած է հաղորդագրութեան մէջ:

Յովնան Արք. Տերտրեանի Զատկական Ուղերձը



Քրիստոսի Հրաշալի Յարութիւնը՝ Դէպի Առաւել Կեանքի Հրաւերն է

Քրիստոս յարեալ ի մեռելոց, Օրհնեալ է Յարութիւնը Քրիստոսի:

Զատիկ է այսօր: Մեր կեանքին մէջ բացուած նոր արշալոյսը՝ Քրիստոսի հրաշալի Յարութեան խորհրդով: Եւ անկասկած բոլորս կ'ապրինք ուրախութեան նոր մակարդակ մը, քանզի կը գիտակցինք, որ Քրիստոսի հրաշալի Յարութիւնը դէպի առաւել կեանքի հրաւերն է:

Քրիստոնեայ հաւատացեալին հաւատքի կեանքին բարձրակէտը՝ Յարութեան ճշմարտութեան ակընդէտ սպասումին իրականացումն է, երբ մեր հոգու աչքերով կ'ըմբռնենք հոգեւոր վերածնունդը մեր ողջ էութեան: Յիշեցէ՛ք Քրիստոսի ոգեշնչող խօսքը՝ ուղղուած Նիկոդեմոսին. «Պարտ է քեզ ծնանիլ վերստին»: Քրիստոսի այս խօսքը մարտահրաւէր մըն է, որ իրօք հրաշագործենք մեր կեանքը:

Արդարեւ, Սուրբ Յարութեան խորհուրդը՝ քրիստոնէական մեր հաւատքին ու կեանքին իմաստը բնորոշող առանցքն ու ողնասիւնն է: Եւ եթէ անհաղորդ ենք այս գերագոյն ճշմարտութեան, ապա կը դադրինք կենսագործելէ եւ ստեղծագործութեամբ կեանքը զարդարելու գիտակցութենէն: Ուրեմն մարդուն կեանքը պիտի ըլլայ ստեղծագործական կեանք:

Տօնախմբել Քրիստոսի հրաշալի Յարութիւնը կը նշանակէ կեանքին նայիլ Աւետարանի լոյս պատգամներու պրիսմակին ընդմէջէն, որ մեր առջեւ կը ներկայանայ Աստուածորդին, որպէս ճանապարհը ճշմարտութեան ու սրբութեան, որուն հետքերով քայլողը կը հանդիպի Արարիչն Աստուծոյ: Մարդուն կեանքը պիտի ըլլայ ճանապարհը դէպի Աստուած, այլապէս կը դառնանք օտարական Աստուծոյ աչքին:

Զատկական տօնին առաւօտը մեր հոգեւոր էութեանը մէջ կը հաստատէ նոր կեանքին ու առաւել կեանքին արշալոյսը: Սուրբ Յարութեան խորհուրդը տօնախմբել պարզ բառերով կը նշանակէ տօնախմբել ու ապրիլ Քրիստոսի կեանքն ու ներկայութիւնը, հաւատալ Անոր առա-

քելութեան եւ ի մասնաւորի ճանապարհորդակից դառնալ Անոր երկրաւոր կեանքին մինչեւ խաչելութիւն, եւ ապա տեսիլքն ունենալ Յարութեան խորհուրդին՝ մարդկութեան կեանքին մէջ բացուած ու արմատացած հոգեւոր յաղթանակին:

Այսօր, անկասկածօրէն մեր մէջ կը ծնի բարի ձգտումը, որպէսզի ձայնակից դառնանք Քրիստոսի եւ յայտարարենք՝ «Ես յաղթեցի աշխարհին»: Աշխարհը կեանքի մէջ առկայ փորձութիւններն են, որոնց յաղթելու համար պէտք է ապրինք խաչի խորհուրդով:

Զատկական խորհուրդը՝ քրիստոնեայ հաւատացեալի հաւատքի կեանքի վերամկրտութիւն է, մեր հաւատքի կեանքին նոր առաւօտը եւ Յարութեան հետ հանդիպելու ու Անոր յաւիտենական ներկայութիւնը վայելելու յոյսն ու խոստումը: Զատկական տօնը հրաւեր է, որպէսզի վկայախօսը դառնանք Քրիստոսի յարութեան խորհուրդին, Անոր հետ խաչը բարձրանալով, եւ Անոր Յարութեամբ մեր հոգեւոր էութեան մէջ ծնունդ տալու յարութեան յոյսին:

Քրիստոսի յարութեան խորհուրդը տօնախմբել կը նշանակէ իջնել հոգիներուն խորքը, որպէսզի յարութեան շունչով նոր իմաստ ներշնչենք մեր անհատական կեանքին, մեր ընտանեկան կեանքին եւ մեր համայնքային-ընկերային կեանքին: Մեր անհատական կեանքը պիտի դարձնենք Յարութեան խորհուրդով ներշնչուած կեանք: Մեր ընտանեկան կեանքը գերագոյն յաղթանակն է մեր կեանքի:

Եւ ինչպիսի՞ խորհուրդ կը տեսնենք Քրիստոսի Յարութեան տօնախմբութեան մէջ: Աղօթքով կրնանք պատասխանել այս հարցումին. «Քրիստոսի յարութեան խորհուրդով լուսաւորուած մարդուն կեանքը իր մէջ կը տեսնէ առաւելութիւններն ու թերութիւնները եւ իր անձը կը վերահաստատէ կատարելութեան ժայռին վրայ»: Կեանքն ու ժամանակը, Աստուծոյ մէջ մեզի տրուած կարեւորագոյն հոգեւոր դրամագլուխներ են, որոնք երբ իմաստութեամբ կը լեցնենք, այն ժամանակ կը կանգնիք կատարելութեան ժայռին վրայ:

Յիսուսի յարութեան խորհուրդը դժուար է բառերով բա-

ցատրել. հաւատքն է բանալին ըմբռնելու համար յարութեան խորհուրդին անսահմանելիութիւնը, որը կ'ապրինք այն գիտակցութեամբ ու համոզումով, որ յարութիւնը նոյնինքն այն կամուրջն է, որ մարդը կը տանի ու կ'առաջնորդէ դէպի յաւիտենականութիւն: Այս տեսիլքն ապրող մարդը իր մէջ կը գտնէ իր կեանքը կատարելագործելու ներքին զօրութիւնը, որոնքիւ համար ուղիներ ընտանիքը ընկալելու որպէս սրբութիւն սրբոց եւ խաղաղութեան ոգին մատակարարելու մարդկանց միջոց: Հայ քրիստոնեայ ընտանիքը՝ սրբութիւն սրբոցն է եւ ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի: Հայ քրիստոնեայ ընտանիքը՝ Հայաստանի խորհրդանշն է եւ Ս. Էջմիածնի ոգին:

Երանելի է եւ գերերջանիկ է այն քրիստոնեան, որ Սուրբ Յարութիւնը կը դարձնէ հոգեւոր սնունդը իր կեանքին: Քանզի Սուրբ Յարութեան խորհուրդը ապրող մարդուն համար իր ներքին աշխարհի դուռն է: Գիտութիւն անհրաժեշտ չէ հասկնալու համար այս ճշմարտութիւնը, այլեւ միայն անկեղծ հաւատք, այնպէս ինչպէս մեր նախնիք որդեգրցին ծառայակերպ ու աղօթաբոյր կեանք՝ Քրիստոսի կեանքին օրինակին հետեւողականութեամբ:

Արդ, սիրելիներ, Զատկական տօնին մեր պատգամն է, որ ձեր հոգեւոր կեանքը նորոգէք, հաւատքը խորացնէք ձեր էութեան մէջ, բայց ամէնէն աւելին մեր սպասումն է, որ ձեռք-ձեռքի տուած մեր զաւակաց կեանքը զարդարենք քրիստոնէական հաւատքով, որպէսզի ամէն բարի խօսք ու գործ դարձ-

նենք աղօթքի ներշնչող ոգեկան ուժ: Որովհետեւ ինչքան հարուստ են մեր զաւակունք քրիստոնէական հաւատքով, մշտապէս աղօթող, կեանքով Աւետարանի ոգին դրսեւորող, այնքան եւս պաշտպանուած է անոնց կեանքը Աստուծոյ ներկայութեամբ:

Քրիստոս Յարեալ ի Մեռելոց Օրհնեալ է Յարութիւնը Քրիստոսի:


Քրիստոս իր հրաշալի յարութեամբ պարտութեան կը մատնէ մեր ներքին մեղաւոր մարդը, որպէսզի վերածնինք որպէս նոր մարդ: Մարդկութիւնը երեկ եւ այսօր եւ մշտապէս ծարաւի է նորին: Յիշենք Շնորհալի Մեծ Հայրապետին խօսքը. «Նորոգող հնութեանց, նորոգեալ՝ եւ գիտ, նորօք զարդարեալ»: Քրիստոս է դուռը՝ նոր կեանքին եւ իր յարութիւնը՝ դէպի առաւել կեանքի հրաւերն է:

Զատիկ է այսօր: Զատիկը հայելին է մեր նոր կեանքին: Եւ այսօր, Ս. պատարագով ներշնչուած, մեր ընտանիքներով հաւաքուած կը տօնենք նոր կեանքը՝ Քրիստոսի Յարութեան լոյսով: Սուրբ Յարութիւնը մեր ազգի ծնունդ տուող արմատն է, որուն մայրն է եղած երէկ, այսօր եւ յաւիտեան՝ Հայց. Առաքելական մեր Մայր Եկեղեցին, որուն խորանէն կը քարոզենք հրաշալի Յարութիւնը Քրիստոսի:

Քրիստոս Յարեալ ի Մեռելոց Օրհնեալ է Յարութիւնը Քրիստոսի:

Հայրական օրհնութեամբ՝ Առաջնորդ ԱՄՆ Արեւմտեան Թեմի

Սուրբ Զատիկ, 2024



Զմայերայրն

ԽՐԱԽՈՃԱՆՔ

ԶՈՒԿԿԵՐՈՅԹ

Կազմակերպութեամբ՝
ԿԼԵՆՏԷՅԼԻ ԱՐՍԷՆ ԿԻՏՈՒՐ
ՄԱՍՆԱԺԻՒՂԻ

Ծարաթ, 4 Մայիս 2024
երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ
1060 N. Allen Ave. • Pasadena, CA 91104



ՄՈՒՏՔԻ ՆՈՒԷՐ՝ \$60.00
Գիճիճ Գերաւեալ

Տոմսերու համար դիմել՝
818-913-4024 • 626-491-7899



Նախաձեռնութեամբ՝ Նոր Սերունդ Մշակութային Միութեան Մանուկներու Յատուկ Ձեռնարկ Ս. Յարութեան Տօնին Առթիւ



Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչական կազմը, Ուրբաթ, Ապրիլ, 22-ի երկուցեան ժամը 4-ին, Հ.Կ.Բ.Մ-ի կեդրոնին մէջ ջերմօրէն ընդունեց Ս. Ջատիկի եւ Յարութեան Տօնի առթիւ ակումբ ժամանած այն փոքրիկները որոնք իրենց ծնողքի ընկերակցութեամբ եկած էին մասնակցելու վարչութեանս նախաձեռնած փոքրիկներու յատուկ Ս. Ջատիկի նուէր-ուած ձեռնարկին:

Փոքրիկները խանդավառ էին եւ ուրախ, իրենց համար շատ սիրելի գոյնգոյն հաւկիթներով զարդարուած սեղաններն ու նապաստակներն տեսնելով եւ իրենց հասակակից ընկերներուն միանալով:

Բացման խօսքով հանդէս եկաւ ընկերուհի Անի Բինէճեան բարի գալուստ մաղթելով ներկաներուն



Շնորհաւորեց Յիսուս Քրիստոսի հրաշափառ Յարութեան տօնը, ընկերուհի Անին, նշեց թէ հայկական բոլոր տօները խորհրդանշող աւանդութիւններն ու սովորութիւնները ծանօթացնելը մեր մանուկներուն ու պատանիներուն անհրաժեշտ են եւ հիմնական դեր



կը կատարեն մեր ազգի գոյութեան եւ սերունդներու հայակերտման: Ընկերուհին բարի վայելում մաղթեց ապա հրաւիրեց փոքրիկները մասնակից դառնալու իրենց օրուայ ծրագրի իրադրծման երգերով, արտասանութիւններով իրենց համար իւրապատուկ պատրաստուած գոյնգոյն հաւկիթներու խաղերով:

Փոքրիկներու ուրախութիւնը անսահման էր ու անբացատրելի նամանաւանդ նապաստակի անակնկալ ժամանումով, անոնք արտասանեցին պարեցին ու երգեցին նապաստակին շուրջ եւ ստացան գատիկը խորհրդանշող նուէրներ եւ համադամ քաղցրեղէններ:

Ներկաները եւ յատկապէս՝ փոքրիկները բաժնուեցան սրահէն տօնական ուրախ տրամադրութեամբ, հոգեկան բաւարարութիւն տալով կազմակերպիչ յանձնախումբին որ կարողացած էր հայ մանուկը ուրախ պահել եւ քրիստոնէական այս Սուրբ տօնի առթիւ համախմբել զանոնք նոյն առաստաղի տակ շարունակելով մեզի ժառանգուած պայպենական հիանալի հայկական աւանդութիւնները:

ԱՆԻ ՄԱՐՍԷԼԵԱՆ

Ապրիլ Ամիսը Հայկական Յեղասպանութեան Ծանաչման Ամիս



Փաստենա Քաղաքի Հայկական ձեմարանի աշակերտները Հայոց Յեղասպանութեան հուշակազիր ներկայացուցին

Փաստենա քաղաքի Հայկական ձեմարանի (The Armenian Academy at Blair School) աշակերտները 28 Մարտ 2024, Հինգշաբթի օր, նոյն քաղաքի հանրային դպրոցներու Ուսումնական Խորհուրդին (Pasadena Unified School District Board of Education) ներկայացուցին Հայկական Յեղասպանութեան հուշակազիր մը, որ ունէր հետեւեալ խորագիրը. »Resolution 2751 - Armenian Genocide Remembrance - April PUSD recognizes April as the month to memorialize the casualties of the Armenian Genocide, which occurred between 1915 and 1923«:

Նիստին ներկայ էին քաղաքի բազմաթիւ հայ եւ օտար բնակիչներ, ձեմարանի ուսուցչական կազմը եւ ծնողներ:

Հայկական ձեմարանի աւագ դասարանի աշակերտներ էլ լին վարդանեանը, Մեղեղի Պաղտասարեանը եւ էրիք Նահապետեանը ուսումնական Խորհուրդի եօթը անդամներուն առջեւ ընթերցեցին

երկարաշունչ հուշակազիրը: Բարձրախօսին առաջին մօտեցողը Մեղեղի Պաղտասարեանն էր: Ան ներկայացուց Հայոց Յեղասպանութեան պատմութիւնը՝ անոր ծրագրաւորումէն մինչեւ գործադրութիւնը, յանձնառու դերակատարներէն՝ մինչեւ վերջնական նպատակը: Յաջորդը էրիքն էր: Ան կարգաց ԱՄՆ նախագահներու, ինչպէս նաեւ՝ ԱՄՆ ծերակոյտի եւ նահանգներու, յատկապէս՝ Քալիֆորնիոյ նահանգի ցուցաբերած հակազդեցութիւնը Հայոց Յեղասպանութեան յաջորդող օրերուն, իւրաքանչիւրին կատարած մարդասիրական օգնութիւնները եւ անոնց առած օրինական քայլերը դէպի ճանաչում: Երիտասարդը պատկերալից ձեւով ներկայացուց Արցախի մէջ ստեղծուած վիճակը, կէտ առ կէտ թուելով մարդկութեան հանդէպ գործադրուած յանցանքներու անպատժելիութեան անսրբազրելի հետեւանքները, ինչպէս աշխարհը ակառատես եղաւ՝ Արցախի ամբողջական հայաթափումը, մշակութային եւ հոգեւոր ժառանգութեան կո-

Շար.ը էջ 18

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԷՇ
 (200 ՇՈԳԻ ՇԱՍԱՐ)

ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՇԱՍԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
ՇՈՒԱԶԱՅՆԵԼ (626) 797-7680

HOMENMEN LADIES AUXILIARY

Mother's Day

Mother's Day Celebration
SATURDAY MAY 11, 2024
11 AM
LUNCHEON
DJ, SURPRISES, GAMES

"I can imagine no heroism greater than motherhood."

PHOENICIA RESTAURANT Donation \$100
343 N. CENTRAL AVE.
GLENDAL, CA. 91203

Lena 626-485-6434
 Karine 818-324-0574

Massis Weekly

Volume 44, No. 13

Saturday, April 6, 2024

French Foreign Minister Slams Azerbaijani Claims on Armenian Territory



PARIS — French Foreign Minister Stéphane Séjourné has expressed concern over Azerbaijani claims on Armenian territory, the fake news coming from Baku.

“We have reaffirmed our commitment to the territorial integrity of Armenia, which is now being questioned by Azerbaijan, and let me say how worried we are about that, given that Azerbaijan’s rhetoric is getting out of hand,” Séjourné said at a joint press conference with visiting US Secretary of State Antony Blinken.

“We are very worried given that the rhetoric of Azerbaijan is getting out of hand, and we also see an increased number of fake news coming from Baku, and they try to blame Armenia

for an escalation even though Armenia is probably the only one willing and trying to avoid it in this part of the world.

The French foreign minister said that they see many similarities with what Russia is applying to Ukraine, calling for attention to this issue six months before COP29 in Baku.

On April 1, the CSTO responded to Yerevan’s demand to clarify its zone of responsibility in Armenia by saying that “the CSTO’s zone of responsibility ends where the state border passes, which is settled bilaterally between Armenia and its neighbors.”

Referring specifically to Azerbaijan and its refusal to recognize territorial integrity of Armenia.

Their Can Be No Other Government in Armenia Apart From the Armenian Government. PM Pashinyan



YEREVAN — Prime Minister Nikol Pashinyan lambasted Nagorno-Karabakh’s exiled leaders taking refuge in Armenia, for continuing to present themselves as a government in exile and threatened to crack down on them on Thursday.

Opening a weekly session of his cabinet, Pashinyan stressed for three times that “there can be no government in Armenia apart from the government of Armenia.”

“I cannot but note that certain circles of people displaced from

Artsakh (Nagorno-Karabakh) are voluntarily or involuntarily taking steps that pose a threat to Armenia’s national security. They proclaim some governments in exile and so on. I want to say clearly that there is one government in Armenia, and this government is sitting in this hall,” Pashinyan said at a government session on Thursday.

“If somebody in Armenia identifies themselves as a government [in exile,] then it’s a national security

Continued on page 3

Massis Publishing Presents: U.S. Premiere of “RED” Documentary

PASADENA - Massis Publishing is thrilled to present the U.S. premiere of “RED,” an English-subtitled documentary film produced and directed by Kadir Akin. The screening will take place on Thursday, April 18, 2024, starting at 8:00 PM at the AGBU Vatche and Tamar Manoukian Cultural Center located at 2495 E Mountain St, Pasadena, CA 91104.

“RED” is based on the groundbreaking book “Armenian Revolutionary Paramaz - Armenian Socialists and Genocide from Abdulhamid to Ittihat Terakki,” authored by Kadir Akin. The film delves into the profound themes of justice and loyalty, exploring the intricate history and struggles of Armenian revolutionaries amidst the backdrop of the Armenian Genocide.

The screening will be followed



by a Q&A session featuring the esteemed director, Kadir Akin, and special guest Garo Paylan, former Deputy of the Turkish Parliament. This discussion promises unique insights into the film’s production, the evolution of regional ideology, and current geopolitical affairs.

Continued on page 3

Armenian Authorities Not Going to Even Discuss Surrender of Any Territories – Parliament Speaker



YEREVAN (Arka) — Armenian authorities are not going to even discuss the surrender of any territories (to Azerbaijan), Parliament Speaker Alen Simonyan said in an interview with the Public Television of Armenia, commenting on the situation with villages in Tavush region of the country.

“First, in Armenia, it is forbidden by law to surrender anything to anyone. Second, Armenian authorities are not going to even discuss such a thing about any territory of the country,” he said.

He described talk about surren-

dering villages in Tavush, particularly Voskepar village, to Azerbaijan “despicable speculations” and noted that these are the territories where the Armenian side is ready for starting the border delimitation process with Azerbaijan.

“What is ours will remain ours, what is theirs will remain theirs,” he said, adding that the Armenian side is waiting for Baku’s response.

According to Simonyan, there is no gas pipeline branch in this border area, but there is a section of the road

Continued on page 3

Armenia Blocks Russian TV Programs for Offensive Contents

YEREVAN — Armenia has blocked pro-Kremlin Russian TV host Vladimir Solovyov's shows on its territory over continuous violations of a 2020 Russian-Armenian agreement that allowed the Russia-1 channel to retain its slot in Armenia's national digital package accessible to viewers across the country.

The Television and Radio Broadcasting Network agency cited provisions of the agreement banning "offensive content against peoples and national values" and "interference in domestic political life."

The Armenian government earlier sent a protest note to Moscow over comments made by Solovyov and another Russian media figure, Margarita Simonyan, during a February 25 talk show. They said that Armenian leaders should be mindful of what they called disastrous consequences of Western intervention in other ex-Soviet states.

Solovyov continued to attack Yerevan's increasingly pro-Western foreign policy after that complaint. He warned that Armenians risk losing their statehood because of it.

Minister of High-Technology Industry Mkhitar Hayrapetyan announced



on March 18 that Armenian and Russian officials will meet in Moscow soon to discuss Armenian proposals regarding the content of retransmitted Russian programs. Hayrapetyan's press office declined to clarify on Friday whether the talks took place and, if so, resulted in any agreements.

The Armenian Foreign Ministry already summoned the Russian ambassador in Yerevan last October to condemn Channel One, the other Russian broadcaster accessible in Armenia, for disparaging PM Nikol Pashinyan during an hour-long program.

Varsen Aghabekian Appointed Foreign Minister in New Palestinian Government

RAMALLAH – Palestinian Authority Prime Minister-designate Mohammad Mustafa has presented his government's action plan and proposed formation list to President Mahmoud Abbas for confidence under the Basic Law for its approval, Wafa reports.

Palestinian Armenian Varsen Aghabekian has been appointed Minister of State for Foreign Affairs and Expatriates in the new cabinet.

Aghabekian was born in Jordan in 1958. She is a member of the Higher Presidential Committee for Church Affairs in Palestine. In 1983, she received a master's degree at Purdue University, Indiana, USA, and a doctorate in political affairs at the University of Pittsburgh. In 1988-2008, Aghabekian worked at the University of Jerusalem as an associate professor, and then—as a dean.

The new government's program emphasizes that its political reference is based on that of the Palestine Liberation Organization, its international commitments, and the assignment letter



directed from President Mahmoud Abbas to the government.

The government program prioritizes humanitarian issues, encompassing a comprehensive plan for humanitarian aid and immediate relief for the Palestinian people in the Gaza Strip, as well as recovery and reconstruction efforts in both the Gaza Strip and the West Bank. It also focuses on efforts to stabilize the financial situation and its economic impact.

Armenian, UK Defense Representatives Hold Bilateral Talks in London



LONDON -- Within the framework of defense cooperation between the Republic of Armenia and the United Kingdom, discussions on combating corruption were held in London from March 28 to 29, the Armenian Defense Ministry said.

The Armenian delegation was headed by the Secretary General of the Ministry of Defense of the Republic of Armenia, Hamlet Batikyan.

During the event, a meeting with the delegation of the UK Ministry of Defense led by the Director General of Security Policy, Paul Wyatt, and the Director of Defence Assurance, Guy Lester, took place.

Ambassador Extraordinary and Plenipotentiary of the Republic of Armenia to the United Kingdom of Great Britain and Northern Ireland Varuzhan

Nersesyan, also participated in the meeting.

During the meeting, issues related to Armenia-UK cooperation in the fight against corruption were discussed.

Secretary General of the Ministry of Defense Hamlet Batikyan presented the current anti-corruption programs of the Ministry of Defence. The British delegation shared their expertise and methodologies in this field, expressing readiness to provide necessary assistance to the Ministry of Defense of the Republic of Armenia.

During the discussions, a number of agreements were reached in the direction of implementing joint projects, providing expert and methodical support.

against Ukraine, occupation of Georgia's sovereign territory and destabilizing actions in the region and around the world. Therefore, we cannot regard Russia as a reliable ally or partner in the South Caucasus or elsewhere," added the department.

Prime Minister Nikol Pashinyan has pledged to "diversify" Armenia's foreign and security policy in response to what he sees as Russia's failure to

defend his country against Azerbaijani attacks. Amid mounting tensions with Moscow, he has frozen Armenia's membership in the Collective Security Treaty Organization (CSTO) and threatened to leave the Russian-led military alliance altogether. Pashinyan and his allies say that closer security ties with the West will help the country

US State Department Responds to RAND Corporation Report on Prospects of Yerevan-Washington Relations



WASHINGTON, DC—The U.S. State Department has pointed to Russia's "destabilizing actions" in the South Caucasus, responding to analysts from an influential U.S. think-tank who warned Armenia against severing ties with Moscow and fully aligning with the West.

In an article published on March 14, Joe Haberman and Paul Cormarie of the RAND Corporation argued that the United States "cannot play the role of security guarantor" for Armenia even if it decides to supply the latter with some defensive weapons.

"It is thus hardly feasible to fully pivot away from Moscow, which despite its current preoccupation with Ukraine could still impose disastrous costs to Armenia," they wrote. "Armenia's national interests would be best served by hedging its security relationship with Russia without unduly alienating Moscow by abandoning it altogether."

"Yerevan is going to maintain complex economic, social, and strategic relations with its neighbors, including both Russia and Iran, and it would be folly to pressure them to make an all-or-nothing binary choice between a Western alignment or nothing. The West should recognize and accept Armenia's multi-alignment and focus on areas where it is comparatively able and willing to deepen ties and foster stability," concluded the RAND analysts.

Commenting on these policy recommendations to the Voice of America on Tuesday, the State Department said the U.S. is expanding its relations with Armenia to support the country's sovereignty, territorial integrity and "democratic development." Washington, it said, also welcomes "any bona fide engagement that brings peace and stability to the South Caucasus nations."

"We have witnessed Russia's continuing devastating aggression

Armenia Sends Humanitarian Aid to Gaza



YEREVAN — Armenia sent on Thursday a planeload of humanitarian aid to Gaza ravaged by the latest conflict with Israel.

The Armenian government said the 30 tons of food and medicine will be delivered to displaced civilians huddling in the Gaza Strip's city of Rafah. It released photographs of those items loaded onto a military transport plane at the Yerevan airport.

Speaking during a cabinet meeting in Yerevan earlier in the day, Deputy Interior Minister Arpine Sargsyan said the aid worth about 19 million drams (\$48,000) will be airlifted to Egypt. Egyptian authorities will then help to ship it to the Rafah border crossing with Egypt, she said.

Prime Minister Nikol Pashinyan noted in this regard that the Armenian and Egyptian governments agreed on the logistical aspects of the shipment

during his recent official visit to Cairo.

Gaza is facing a looming famine amid Israel's military offensive that has reportedly killed more than 32,000 Palestinians. The offensive followed last October's Hamas attack on southern Israel in which the militants killed 1,200 people and abducted more than 250 others.

Armenia twice voted late last year for United Nations General Assembly resolutions demanding an immediate ceasefire in the Palestinian enclave.

"Armenia regrets tens of thousands of innocent victims of the escalation of hostilities in Gaza," Pashinyan said after his March 5 talks with Egyptian President Abdel Fattah al-Sisi. "We ourselves have experienced the horror of attacks on civilians and civilian infrastructure, and we join calls of the international community for an immediate ceasefire in Gaza."


Armenia to Host 2027 World Weightlifting Championships

Yerevan will host the 2027 World Weightlifting Championships. The decision was made by the International Weightlifting Federation today, Chief of Prime Minister's Staff Arayik Harutyunyan informs.

Armenia was not awarded the 2024 World Championships after a man ran onto the stage at the opening ceremony of the 2023 European Championships in Yerevan, seized an Azerbaijan flag and set it on fire.

Arayik Harutyunyan called it a "huge blow to our sport." "But as a result of our consistent work that lasted for months, we can consider that problem solved," he said in a Facebook post.

This is the first World Champi-



onships in an Olympic discipline to be held in Armenia.

Hayastan All Armenian Fund Provides Financial Support to 16 Armenian Educational Institutions in Lebanon

BEIRUT — Hayastan All Armenian Fund has provided regular financial support to 16 Armenian educational institutions operating in Lebanon as part of the ongoing support to the Armenian community of Lebanon.

An amount of \$100,000, donated by the French Affiliate (Fonds Arménien de France), will be allocated to the teaching and technical staff of the following institutions: Central High School, Armenian Evangelical College, Armenian Evangelical Secondary School, Vahan Tekeyan School, Sahaguian Meguerditchian School, Yeghisheh Manouguian School, Noubarian Kherimian School, Haratch Kaloust Gulbenkian School, AGBU School Parekordzaguan Hovaguimian, M. & H. Arslanian College (Djemaran), Hriptsimiantz College, Sainte Croix Harboyan, Mesrobian College, Azkayine Miatsial Varjaran, Mekhitarian College, Armenian Evangelical Chamlian Tatikian Torossian College.



This project supporting Armenian educational institutions in Lebanon was launched in December 2019, during Lebanon's socio-economic crisis, which was further deepened by the catastrophic blast in Beirut in August 2020. Since 2019, the Fund has provided \$2,165,000 to address various needs of the Armenian community in Lebanon, including support for educational institutions.

Their Can Be No Other Government

Continued from page 1

problem for Armenia," he said. "I hope that the existence of that problem will not mean that our [security] bodies have underperformed in their work."

Pashinyan said on Thursday that Armenian security services should be prepared to take "appropriated measures" to also prevent "some circles forcibly displaced from Nagorno-Karabakh" from being used by unnamed "external forces." He did not elaborate.

The warning was clearly addressed to Samvel Shahramanyan, the last president of Nagorno-Karabakh Republic (NKR). In an interview with

France's Le Figaro daily published on Wednesday, Shahramanyan said that all NKR's bodies continue to formally operate after fleeing Karabakh along with the region's entire ethnic Armenian population last September.

"This building where I am receiving you houses the presidential, legislative and judicial offices of Artsakh," he said. "Lawmakers can meet here to vote."

Shahramanyan also reiterated that his September 28 decree liquidating the NKR is not valid. He said that he had to sign the decree in order to enable the Karabakh Armenians to safely flee to Armenia amid an Azerbaijani military offensive.

Armenian Authorities Not Going to Even

Continued from page 1

that runs from Armenia to Georgia.

"When it comes to the question of what to do with the road section, our position is that we can build our road for several kilometers to circumvent that section. We will do it in the most convenient way for us," he said.

Asked whether this is being done under threat, Simonyan said that "we are doing it because we need it."

At the same time, he said Azerbaijan should recognize Armenia's border in the delimitation process "because by doing so it recognizes its border."

According to Simonyan, delimitation commissions hold discussions, issues are raised on both sides, "the logic was, is and will remain mirror-

like, nothing is discussed unilaterally."

"The working process can be called positive, the matter is moving forward, there is mutual understanding"

Responding to public concerns that if the territories in Tavush are ceded under the threat of war, a similar process may start in Syunik and other places, up to Yerevan, Simonyan said, "we are not going to cede anything that is ours to avoid war."

"If we are threatened to surrender this settlement or this mountain which are on the Armenian territory because otherwise there will be war, of course, then we will fight. And there can be no second opinion. Armenia cannot give up anything that belongs to it," he summarized

U.S. Premiere of "RED" Documentary

Continued from page 1

Event Details:

· **Date:** Thursday, April 18, 2024

· **Time:** 8:00 PM

· **Venue:** AGBU Vatche and Tamar Manoukian Cultural Center

· **Address:** 2495 E Mountain St, Pasadena, CA 91104

Admission to the premiere is free; however, due to limited seating, reservations are required. To reserve your

seat, please email info@massispost.com.

Project Credits:

· **Producer/Director:** Kadir Akin

· **Project Advisor:** Alex Keushkerian

· **Cameramen:** Imre Azem, Onur Zeybek

· **Montage:** Imre Azem

· **Sound Mixing:** Studio Istanbul

Join us for a memorable evening

US State Department Responds

Continued from page 2

better cope with its grave security challenges.

The State Department told the Voice

of America that Washington has "consistently encouraged countries in the region to comprehensively assess Iran's intentions and proceed with caution in all dealings with the Iranian regime."

“Armenian Memory, Writing Across Borders: A Reading and Talk” with Pulitzer prize-Winning Poet Peter Balakian

FRESNO — Pulitzer prize-winning poet Peter Balakian will speak on “Armenian Memory, Writing Across Borders: A Reading and Talk” at 7:00PM on Monday, April 22, 2024, in the University Business Center (UBC), Alice Peters Auditorium, on the Fresno State campus. A reception will precede the presentation from 6:00-7:00PM in the UBC Gallery. The event is supported by the Florence Elaine Hamparson Armenian Memorial Fund.

Balakian will read and discuss his poetry and prose with a focus on Armenian historical and cultural memory and diasporan imagination. In his many books of poems and his memoir *Black Dog of Fate*, Balakian has explored – in his distinct poetic form and elliptical language – traumatic intergenerational memory of the Armenian Genocide, as well as the power and beauty of Armenian culture: visual art, architecture, music, and Armenia’s dramatic, natural landscapes.

Peter Balakian is the author of 8 books of poems and 4 books of prose and 3 collaborative translations and several edited books. *Ozone Journal* won the 2016 Pulitzer Prize for poetry, *Black Dog of Fate*, a memoir won the 1998 PEN/Martha Albrand Prize for the Art of the Memoir, and was a best book of the year for the *New York Times*, the *LA Times*, and *Publisher’s Weekly*; *The Burning Tigris: The Armenian Genocide and America’s Response* won the 2005 Raphael Lemkin Prize and was a *New York Times* Notable Book and a *New York Times* Best Seller. His collaborative translation of Grigoris Balakian’s *Armenian Golgotha: A Memoir of the Armenian Genocide* was a *Washington Post* book of the year. *Vice and Shadow: Essays on the Lyric Imagination, Poetry, Art, and Culture* was published in 2016.

Balakian is the recipient of many awards and prizes and civic citations: the Pulitzer Prize, The Presidential Medal and the Movses



Khorenatsi Medal from the Republic of Armenia, a Guggenheim Fellowship, a National Endowment for the Arts Fellowship, The Spendlove Prize for Social Justice, Tolerance, and Diplomacy (recipients include President Carter); and The Emily Clark Balch Prize for poetry from the *Virginia Quarterly Review*. He has appeared widely on national television and radio programs such as 60 Minutes, PBS News Hour, ABC World News Tonight, Charlie Rose, CNN, C-SPAN, NPR, and Fresh Air, and his work has been translated into a dozen languages and foreign editions including Armenian, Arabic, Bulgarian, French, Dutch, Greek, German, Hebrew, Italian, Spanish, Russian, Serbo-Croatian, Tamil, Turkish.

Balakian is Donald M. and Constance H. Rebar Professor of the Humanities, Professor of English and Director of Creative Writing at Colgate University.


A selection of Balakian’s books will be on sale at the event. The lecture is free and open to the public. Free parking is available, with a parking code provided at the lecture, in Fresno State Lot P6, near the University Business Center, 5245 N. Backer Ave., Fresno State.

The presentation will also be live-streamed on YouTube at: <https://bit.ly/armenianstudiesyoutube>.

NAASR to Host First Public Screening of Nubar Alexanian’s Film “Finding Armenia”


BELMONT, MA — The National Association for Armenian Studies and Research (NAASR) will host the first-ever public screening of *Finding Armenia*, a documentary by Nubar Alexanian, on Wednesday, April 10, 2024, at 7:30 p.m. at its Vartan Gregorian Building, 395 Concord Ave., Belmont, MA. This movie screening is free and open to the general public.

This special program in commemoration of the Armenian Genocide is jointly sponsored by NAASR with Amaras Art Alliance, the Armenian Cultural Foundation, the Armenian Museum of America, Hamazkayin Armenian Educational and Cultural Society, Project SAVE



Armenian Photograph Archives, and

Armenian Sacred Music Project Announces Fall2024 Scholarship Winners



LOS ANGELES – The Armenian Sacred Music Project takes great pride in recognizing and supporting the exceptional achievements of six university students. Through the Kinarik Altinyuzuk Scholarship Fund, the non-profit is embarking on a historic journey to sponsor and safeguard the rich heritage of Armenian sacred music, and continue fostering its growth among students across the United States, Europe, and Armenia. The Kinarik Altinyuzuk Scholarship Fund is proud to disperse \$4,500 USD in total financial aid to this fall semester’s scholarship recipients.

“I am proud to honor the legacy and life of my beloved grandmother by ensuring that her passion and love for the Armenian Apostolic Church and sacred music continues to survive and thrive for deserving students.” – Sevag Derderian, Founder and President

Alina Adamyan: Karlsruhe University of Music Karlsruhe, Germany
Major: Music; Violin
Tigran Mardanyan: Boston Con-

servatory Boston, MA

Major: Music; Piano
Robert Melkumyan: The Institute of Contemporary Music Performance, London, England

Major: Creative Music
Samvel Davtyan: Yerevan State Conservatory Yerevan, Armenia

Major: Music; Trombone
Lilia Medea Yarialian: University of Maryland Maryland, Washington D.C.

Major: Ethnomusicology
Alexandra Yarialian: University of Maryland Maryland, Washington D.C.

Major: Ethnomusicology
The Armenian Sacred Music Project invites all faithful and community members to champion these students as they continue their musical education and promote Armenian sacred and secular music within their communities and parishes.

To support the Armenian Sacred Music Project in their initiatives, please email hello@sacred-music.org or visit www.sacred-music.org

Tekeyan Cultural Association.

The program will be introduced by esteemed filmmaker and producer Theodore Bogosian and will include remarks by and discussion with director Nubar Alexanian and editor Sabrina Zanella-Foresi following the screening.

An intimate portrayal of one man’s search for the essence of an Armenian identity, Massachusetts native Nubar Alexanian’s *Finding Armenia* not only provides a vital history lesson for those unfamiliar with the Armenian Genocide, but also challenges its viewers to grapple with the profound questions that influence all of our identities. What does the healing of intergenerational trauma look like? What does it mean to regain control of our ancestral narratives? How can these narratives be reconciled with a hostile world? And what responsibility do we have to painful

histories, even when they are not our own?

Nubar Alexanian is a documentary photographer whose work has been featured in major magazines in the United States and Europe, including *The New York Times Magazine*, *Life*, *Fortune*, *Geo*, *The New Yorker*, *Time*, *Newsweek*, and others. For the past 40 years, he has travelled to more than 30 countries focusing on long-term personal projects that describe the human condition. He is a Fulbright Scholar with six books in print and one-person exhibitions at the Walker Art Center, Corcoran Gallery of Art, Caren Golden Fine Art Gallery (NYC), Atlanta Contemporary Art Center, LOOK3 Festival of the Photograph, Clark University, and The Burden Gallery, New York.

For more information contact NAASR at hq@naasr.org.

1915
GENOCIDE
CONTINUES
2024


Armenian Genocide Commemoration Events

APRIL 24
4:30 PM
AGC
COMMUNITY WIDE
PUBLIC EVENT



PARCHER PLAZA
GLENDALE CITY HALL
613 E. BROADWAY, GLENDALE, CA

WATCH ON
APRIL 24
7:00 PM



AGC's ONE HOUR
ONLINE SPECIAL
PROGRAM

WWW.AGC1915.ORG

APRIL 21
9:00 AM - 3:00 PM

**GNAZ
BLOOD DRIVE
WITH AMERICAN
RED CROSS**

ARMENIAN CHURCH
OF THE NAZARENE
411 E ACACIA AVE.
GLENDALE, CA

APRIL 21
4:30PM

**CITY OF GLENDALE
COMMEMORATION**

ALEX THEATRE
216 N BRAND BLVD,
GLENDALE, CA

APRIL 24
10:00 AM

**UACLA
RELIGIOUS
CEREMONY &
PLACEMENT OF
FLOWERS**

MONTEBELLO
ARMENIAN GENOCIDE
MONUMENT

APRIL 24
12:00 PM

**AYF
DEMONSTRATION**

TURKISH
CONSULATE GENERAL
IN LOS ANGELES
8500 WILSHIRE BLVD
BEVERLY HILLS, CA

(888) 924 1915



Ապրիլ 24-ին Ընդառաջ Մեծ Եղեռնի Արժեքներին Գիտնական (Հայրենական Մի Նամակը՝ Ուղղուած Առ Որ Անկ Է)

ՀԵՆՐԻԿ ԱՆԱՍԵԱՆ

... Ինչպէս երեւում է, դիւանա-
գիտական, մարդասիրական միջոց-
ները չեն օգնում ազգային հարցեր, ի
մասնաւորի Հայերի ՅԵՂԱՍՊԱ-
ՆՈՒԹԵԱՆ հարցը վերջնական
հանգրուանին հասցնելը: Հողագն-
դի վրայ ամէն մի հարց այսօր
դրական լուծման կարող է հասնել
միայն ու միայն ուժի դիրքերից
էլէլէլով: Չարեւոյցեան հաւաքական
ուժն էլ այսօր չի օգնի դրամատի-
րական այս աշխարհում, թէեւ հա-
ւաքականութեան մէջ էլ ենք կա-
ղում... սակայն՝ ես հաւատում եմ
Պարոյր Սեւակի Մարգարէական
խօսքերին

... Դո՛ւ, որ վաղուց ես կոչւում
ժողովուրդ, թէպէտ ակամայ դեռ
ժողովուրդ չեմ,

Տակաւին ցիր ես, ցան ես եւ
սփիւռք,- դու աշուհեալ ժողով-
ուրդն պիտի

Նախ՝ ինքդ քո Մէջ, եւ ապա՝
քո ՇՈՒԲԶ,

Յիշելով, որ այս Չարդ-կոտոր-
ածը երէ՛կ չ'սկսուեց, երէ՛կ
չ'սկսուեց...

Եւ չի՛ աւարտուել, չի՛ աւարտ-
ուում:

Հայաստանի ժողովուրդը
մեր Յեղասպանութեան մասին
լաւատեղեակ դարձաւ Սփիւռքից
արտագաղթած հայորդիների՝ «Ախ-
պարները» շնորհիւ, որոնց
լիզընդիները բողոքում էլ ծնունդ-
եղանքը կան ստեղծագործութիւն-
ներ, արդիւնքում, ինչպէս ասում
են՝ «բացուեցին ժողովրդի աչքե-
րը»:

Արդարութիւնը պահանջում է
ասել, որ անցեալ դարի 20-30-
ական թ.թ. Հայաստանի մտաւորա-
կաններն ու գրողները քաջատեղ-
եակ էին Յեղասպանութեանը:

Նրանք պատրաստ էին իրենց
գործերով լուսաբանել թուրքերի՝
նախապէս ծրագրուած սոսկալի
ոճիրի բոլոր մանրամասնութիւն-
ները, սակայն՝ Սովետական Կառա-
վարութիւնը 1922 թ. արգելեց որե-
ւէ թթու խօսք ասել թուրքերի
հասցէին՝ պատճառաբանելով, որ
նրանք Սովետական երկրի բարե-
կամն են:

Ստալինի մահից եւ, շատ կա-
պէս, դժոխածին Բերիայի գնդա-
կահարութիւնից յետոյ էր, որ բաց-
ուեց լուսաբացը:

Յիշեցէք անցեալ դարի 55-60-
ականները, երբ մարտիկ-բանաս-
տեղծ Պարոյր Սեւակը գրա-քննու-
թեան այդ դժուարին տարիներին
հրատարակ հանց իր «Անլուելի
Ջանգալատուն» պոէմը՝ տպագր-
ուած 1959 թուականին: Դա արդէն
խակական յեղափոխութիւն էր գրա-
կան աշխարհում եւ ընթերցող հա-
սարակութեան համար: Սեւակի փա-
ռահեղ գործը ձեռքից-ձեռք անցնե-
լով հասաւ Սփիւռք եւ քանիցս
տպագրուեց Լիբանանում եւ Թեհ-
րանում:

Խաղաղ օրերի փոթորկոտ
վայրի էր նման Երեւանը: Միմե
էր ողջ երկիրը, մարդիկ ձեռքից-
ձեռք էին խլում Սեւակի պոէմը:
Ապրիլեան տաքուկ թուացող շնչով
ողողուած Աբովեան փողոցը լի էր
հազարաւոր մարդկանցով, գալիքի
պայծառ յոյս էր արթնացել
հոգիներում: Նոյն փողոցի գրախա-
նութիւններում մէկ-երկու ժամուայ
մէջ, դարակներից չբացան Սեւակի

մի քանի հազար հատորները: Իսկ
հանրախանութի առջեւ հաւաք-
ուած ժողովրդի միջից կարելի
էր լսել բարձրաձայն ընթերցում-
ներ Սեւակի պոէմից: Մինչ այդ,
ԵՂԵՌՆ ԲԱՍԻՆ անծանօթ մարդ-
կանց համար կարծես մի նոր
աշխարհ էր բացուել:

Սեւակի «Անլուելի Ջանգա-
լատուն» պոէմին յաջորդեց, 1963-
ին տպագրուած «Երեւանի պա-
տարագ» պոէմը եւ «Մարդը ասի
մէջ» բանաստեղծութիւնների ժո-
ղովածու: Այս երեք գործերն
ընթերցելուց յետոյ, մարդիկ հաս-
կացան որ, եթէ մարդկութիւնը
աւերուէ է գործում եւ չարիք
ստեղծում ամենուր, ու արիւն
հեղում՝ դա նրանից է, որ մարդիկ
չեն ճանաչում Արարչին, չեն
հաւատում նրա գործութեանն ու
լոյսին, որովհետեւ այդ նոյն մար-
դիկ, բանաստեղծի սասածի նման՝
«այն արիւնով, որ աշխարհ են
ծաղկեցնում, խեղդում են իրար
միեւնոյն արիւնով»:

...Մօտենում էր 1965 թուա-
կանի Ապրիլի 24-ը, Մեծ Եղեռնի
օրը: Մինչ այդ, երկու-երեք տար-
ուայ ընթացքում Հայաստանի ողջ
ժողովուրդը աւելի կամ պակաս
չափով տեղեակ դարձաւ Յեղաս-
պանութեան մանրամասնութիւն-
ներին եւ Թուրքերի կողմից մեր
քաղաքների, գիւղերի եւ հողերի
զրամանը:

... 1964 թուականի Յուլիս-
եան տապ օրերից մի օր, երբ ես
մեր տան պարտէզի ծիրանի ծա-
ռից գերհասած (կարծեմ նոր բառ
է,- Հեն. Ա.) Շալախ որակի ծիրան
էի հաւաքում, բակում յայտնուեց
մի ամուսնական գոյգ: Հայրիկս
անմիջապէս գնաց ընդառաջ, ու
հրաւիրեց հարմարաւետ տեղա-
ւորուել հսկայ ծառի շուքի տակ
դրուած թախտի (առանց հենակի
փայտէ բազմոց) վրայ:

- Հենրիկ, տղաս, իջիր ներ-
քեւ, բաւարար է հաւաքածդ ծի-
րանը, հիմա Մարիետան էլ մի
սուրճ կը պատրաստի մեր հիւրերի
համար, կ'ասենք, կը խօսենք,
ասաց հայրիկս:

Առանց հիւրերին մօտենալու
իջայ ծառից, այգու ծորակի տակ
ծիրանը մի լաւ լուալուց յետոյ, լի
թասը ձեռքիս մօտեցայ հիւրերին:

- Արշակ, ծանօթացիր, Հեն-
րիկն է, փոքր տղաս, կոնսերվա-
տորիայում (երաժշտանոց) է սո-
վորում: Կարծեմ քեզ ասել եմ այդ
մասին:
- Այո, այո, գիտեմ, գիտեմ
աւելին..., իմացայ որ Սեպտեմբե-
րին էլ Լեհաստան է գնալու «Վար-
շաւեան աշուն» երաժշտական ֆես-
տիվալին (փառատօն) մասնակցե-
լու:

Մէկ վայրկեան շուարուածի
մատնուեցինք ամենքս: Այդ մասին
քչերը գիտէին: Լուռութիւնը խախ-
տեց ինքը՝ Արշակ (անունը փոխ-
ուած է, ժառանգները ողջ են)
կոչեցեալը:

- Էդ ինչի՞ գարմացաք, ես՝ իմ
աշխատանքի բերումով շատ բան
գիտեմ..., դէ լա՛ւ, հեն ա, Մարի-
ետան սուրճը ձեռին մեզ է մօտե-
նում:

Իբր բան չ'եղածի պէս «մո-
ռացուեց» միջադէպը: Ես անմի-
ջապէս հասկացայ թէ ում հետ
գործ ունենք..

Հիւրերի գնալուց յետոյ, հրա-

ման արձակելու պէս՝ հայրիկս
ասաց,- խնդրում եմ Արշակի ներ-
կայութեամբ քաղաքականութեան
մասին երեք խօսք չբանալ:

Որքան մօտենում էր 1965
թուականը՝ այնքան աւելի յաճախ
էին դառնում Արշակի այցելու-
թիւնները: Նրան յաջողուեց ծանօ-
թանալ մեր բոլոր հարեւանների
հետ, որոնք նկատելի արգահա-
տանքով էին արտաթաղուում նրա
մասին: Ինքս էլ՝ առաջին իսկ
վայրկեանից չսիրեցի նրան:

Ապրիլ 24-ի նախօրերին
Արշակը մեր հարեւաններին յոր-
դորել էր մասնակից չզառնալ հա-
մաժողովրդական ցոյցին եւ այլան-
դակ որակուածով փնտրել Դաշնակ-
ցութեանը, որ իբր թէ նրանց
սարքած գործն է եւ, ըստ իրեն,
վտանգաւոր է մասնակից դառնալը
նման գանգաւածալից ցոյցին, որով-
հետեւ կառավարութիւնը խստա-
գոյն միջոցներ է ձեռնարկելու
ցուցարարների նկատմամբ:

Ապրիլ 24-ից յետոյ Արշա-
կի ոտքը վերջնականապէս կտրուեց
թէ մեր տնից եւ թէ մեր Թաղից:
Սակայն մենք ջերմ յարաբերու-
թիւններ ունենք նրա աղջկայ
ընտանիքի հետ եւ գնալ-գալը ան-
պակաս էր, որոնց ընթացքին մշտա-
պէս բացակայ էր Արշակը: Մի
զաղտնիք կար, որ ինձ մշտապէս
տանջում էր: Ի՞նչ էր պատահել
հայրիկիս եւ Արշակի յարաբերու-
թիւնների մէջ, որ այդպէս լուռ-
թեան մատնուեց ԿԵԳ-ի գործակա-
լի անունը մեր ընտանիքում:

Գաղտնիքը բացուեց հայրի-
կիս մահից (1988թ.) յետոյ: 2004
թուականին հանդիսաւոր պայման-
ներում Երեւանում նշուելու էր
նշանաւոր պատմաբան, հայագէտ,
մատենագէտ, գիտնական Յակոբ
Անասեանի ծննդեան 100-ամեակը:
Այդ առնչութեամբ, հրատարակու-
թեան էի պատրաստում նրա Նա-
մակների Լնտրանին: Եւ, ի՞նչ է ք
կարծում, ի՞նչ գտայ դրանց մէջ,-
հայրիկիս՝ գրամեքենայով գրուած
նամակի կրկնօրինակը՝ ուղղուած

մեր «հերոս» Արշակին:
Նամակի բովանդակութիւնը
կարգալուց յետոյ, առաջին վայրկե-
անին ընթերցողին կարող է թուալ,
թէ դա գուտ անձնական բնույթ է
կրում, սակայն՝ բնաւ էլ այդպէս չէ:
Նամակում երկու գործող անձ են,
մէկը՝ իշխանութիւններին ծախ-
ուած ԿԵԳ-ի գործակալ, իսկ մի-
ւր՝ ճշմարիտ հայրենասէր, Յեղաս-
պանութեան ճանաչման համար պայ-
քարող հաւատաւոր գիտնոր:

Այժմ, հայրիկիս՝ այս օրերի
համար չափազանց համահունչ նա-
մակի բովանդակութիւնը: Գրու-
թիւնը ներկայացնում եմ առանց
որեւէ միջամտութեան, եղածի պէս:
Երեւան, 4 Հոկտեմբերի,
1965թ.

Արշակ-ին
Ես կարող էի չպատասխանել
քո գրութեանը (Օգոստ. 1965թ.),
որը պարզապէս կեղծիք է, բայց,
այնուամենայնիւ, որոշեցի մի քա-
նի բառ ասել, որպէսզի չկարծես
թէ սարիք-ձորից բերած կցկոտոր
խօսքերով համոզել ես ինձ: Ես
նորից եմ կրկնում՝ «Իմ ժողովրդի
դաւաճանողին» ես ընկեր չեմ լի-
նի», եւ այդ պատճառով էլ այդ
խօսքերը ուրիշ շատերի ներկայու-
թեամբ քո երեսին արտասանելիս՝
մերժել եմ սեղմել ձեռքը:

Շատ հետաքրքիր է որ, եթէ
ես, եւ կամ էլ մէկ ուրիշը ասում է
«Իմ ժողովուրդը», դու այդ բա-
ռով հասկանում ես Դաշնակցու-
թիւնը (ըստ քո նամակի 3-րդ եւ
4-րդ տողերի), եւ այսպէս թէ
այնպէս, քեզ իրաւունք ես տալիս
լիաթուք հայհոյելու Հայ ժողովր-
դին: Թէ ինչպէ՞ս,- ես քեզ կը
չիշեցնեմ: Կը չիշեցնեմ թէ ինչը
ինչպէս եղաւ:

Դեռ եղեռնի 50-ամեակի՝ Ապ-
րիլի 24-ի նախօրեակին, դու յա-
ճախակի տները, եւ չգիտեմ ո՞ր
տեղից ստացած թէլադրանքի հա-
մաձայն, անընդհատ պատուուի-

Շար.ը էջ 18

ԱՅՆԹԱՊԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԻ
104-ԴՆ ՏԱՐԵՂԱՐԶԻ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ
Կազմակերպութեամբ
ԱՅՆԹԱՊԻՏԵՐՈՒ ՄԵՄԲԵՐՄԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Գլխաւոր բանախօս
ԴՈԿՏ. ՄԻԼՎԱ Ս. ԳԱՐԱՅԵԱՆ

Հանդիսավար
ԹԱԳՈՒՉԻ ԱՐԶՈՒՄԱՆԵԱՆ

Կիրակի, 14 Ապրիլ 2024, կէսօրէ ետք ժամը 4-ին, Հայ
Աւետ. Ե. Ե. Է. Մերոյնեան վարժարանի
«Արամ եւ Անայիս Պուլորձեան» սրահին մէջ
13330 Riverside Dr., Sherman Oaks, CA 91423
ԳԵՂԱՐՈՒԵՍՍԱԿՄԱՆ ԲԱՄԻՆ
Հիրաւիքային - Չրաւէր Բոլորին

ARMENIAN AINTABTZY CULTURAL ASSOCIATION

Presents

THE 104-TH ANNIVERSARY
COMMEMORATION OF AINTAB HEROIC RESISTANCE

Keynote speaker
DR. SILVA S. KARAYAN

Professor Emeritus Graduate School of Education Founding Director,
Center of Academic Service-Learning California Lutheran University

Master of Ceremony
TAKOUI ARZOU MANIAN

Sunday, April 14, 2024, at 4 p.m.
C. & E. Merdian School, "Aram & Anahis Boolghoorjian" Hall
13330 Riverside Dr. Sherman Oaks, CA 91423

ARTISTIC PRESENTATION
RECEPTION WILL FOLLOW - ALL ARE INVITED

Սրտի խօսք՝ Փանոս Թիթիզեանի Մեծարանքի ճաշկերոյթին Առթիւ

ՎԵՐ. ԴՈԿՏ. ՎԱՐԱՆ Յ. ԹՈՒԹԻԿԵԱՆ

Մարտ 22, 2024, Երեկոյեան ժամը 7:00-ին, Գալիֆորնիայի Կլէնտէյլ քաղաքի Հիլթըն պանդոկի հանդիսարաններէն մէկուն մէջ տեղի ունեցաւ հանրաձայնօթ հայ մտաւորական Փանոս Թիթիզեանի մեծարանքի ճաշկերոյթը՝ ի պատիւ իր երկարատեւ ծառայութեան հայ ազգին եւ Հ. Բ. Ը. Մ.-ին: Ծաշկերոյթն ու հանդիսութիւնը կազմակերպուած էր Արեւմտեան Ամերիկայի Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան կողմէ:

Ստորեւ կը գտնեք Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդի Գործադիր Տնօրէն՝ Վեր. Դոկտ. Վահան Յ. Թութիզեանի «Սրտի խօսքը» այս բարեբաստիկ առիթով:

Թէեւ կամքէ անկախ պատճառներով անձամբ ներկայ գտնուելու առանձնաշնորհումը պիտի չունենամ իմ պատուական Քեսապցի հայրենակից՝ Փանոս Թիթիզեանի մեծարանքի շքեղ հանդիսութեան, սակայն այս բարեբաստիկ առիթով իմ սրտի խօսքը կ'ընեմ յանուն Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդին եւ իմ կողմէս: Զերմօրէն կը շնորհաւորեմ մեր թանկագին հայրենակիցը, որուն համակ կեանքը եղաւ նուիրում եւ ծառայութիւն հայ ազգին եւ մայր հայրենիքին: Աստուած օրհնէ զինք, իր ազնիւ կողակիցն ու հարազատները:

Փանոս Թիթիզեանը ճանչցած եմ 1950-ական թուականներէն, համալսարանական ուսանողութեան տարիներէս ի վեր: Գոհունակութեամբ հետեւած եմ իր ազգային ծառայութեան եւ հիացումով կարգացած եմ իր խորիմաստ յօդուածները: Իսկ անցնող քանի մը շաբաթներուն հոգեկան բաւարարու-

թեամբ եւ անխառն հաճոյքով կարգացած եմ իր նոր լոյս տեսած «Պատկերին Միւս Երեսը» վերտառութեամբ լայնածաւալ եւ բովանդակալից յուշագրութիւնը:

Անվերապահօրէն կրնամ վկայել, որ Փանոս Թիթիզեան իր աւելի քան 70-ամեայ բեղմնաւոր աշխատանքով եւ ազգային անշահախնդիր ծառայութեամբ իմաստաւորած է իր օգտաշատ կեանքը որպէս վաւերական մտաւորական, հմուտ քաղաքագետ, հասարակական ուղղամիտ եւ կորովի գործիչ:

Աստուած օրհնած է Փանոս Թիթիզեանը բազմակողմանի շնորհներով, 98-ամեայ բախտատաբար առողջ մարմնով, պայծառ մտքով եւ մաքուր հոգիով: Փանոս օժտուած է խօսելու եւ գրելու տաղանդով, յանդուգն ու խիզախ կեցուածքով, կուռ տրամաբանութեամբ, իրապաշտ մօտեցումով եւ թափանցիկ անկեղծութեամբ:

Հակառակ իր յառաջացած տարիքին, Փանոս երիտասարդական շուք մը կը կրէ միշտ, որ հիննալ չի դիտեր: Տարիներ շարունակ ան եղած է խոհուն քննադատը մեր քաղաքական խարխափումներուն, մարդկային նիւթապաշտութեան, փառասիրութեան, չարաշահութեան, ապիկարութեանց եւ քաղաքական սայթաքումներուն:

Իր երկարտեւ ազգային ծառայութեան ընթացքին Փանոս երբեք չեղաւ կամակատար գործիչը, լուսանցքի վրայ եղող մտաւորականը, այլ միշտ քալեց մայր պողոտայէն, միշտ բարձրահայեաց եւ սրտապինդ: Ան իր անընկճելի կամքով, անյողողղ հաւատքով անսպառ կորովով իր ծառայութիւնը մատուցանեց եւ իր կարեւոր ներդրումը ունեցաւ ՌԱԿ-ի, ՀԲԸՄ-ի, միջ-կուսակցական եւ միջ-յարանուանական մակարդակներու վրայ: Ան միշտ եղաւ հաւա-

800 Հայ Ընտանիքներ Օգտուած են Պոլսոյ Պատրիարքարանի Ընկերային Ծառայութենէն

Թուրքիոյ Հայոց պատրիարքարանի ընկերային յանձնախումբը, վերջերս ներկայացուցած եւ իր հրապարակած տեղեկագրով հանրութեան լուսաբանած է իր տարեկան գործունէութեան մասին: Պատրիարքարանն ու Պոլսոյ Սուրբ Փրկիչ Հիւանդանոցի հոգաբարձութիւնը մօտէն իրագրեցին զարձան յանձնախումբի մարդասիրական գործունէութեան:

Արդարեւ, ատենապետ Հերման Քալաֆեանի կողմէ գլխաւորուած յանձնախումբի անդամները՝ պաշտօնական այցելութիւններու ընթացքին, իրենց գործունէութեան մանրամասնութիւնները ներկայացուցած են Ս. Փրկիչ Ազգային Հիւանդանոցի ատենապետ Պետրոս

Շիրինօղլուին եւ Թուրքիոյ Հայոց պատրիարք Ամեն. Տ. Սահակ Արք. Մաշայեանին: Անոնք ուշադրութեամբ լսեցին եկեղեցիներու աղքատախնամ մարմիններու եւ կամաւորներու մասնակցութեամբ յառաջ տարուած աշխատանքներուն վերաբերեալ մանրամասնութիւնները: Ներկայիս հայ համայնքէն աւելի քան 800 ընտանիքներ կ'օգտուին ընկերային օժանդակութեան յանձնախումբին բաժնած նպաստներէն:

Յառաջիկային աւելի լայն աջակցութեան համար նախատեսուած ծրագիրը յատուկ քննարկման նիւթ պիտի դառնայ Թրքահայ Վարդապետներու Միութեան (ԹՎՄ-ERVAB) կողմէ:

Սիջազգային Գիտաժողով Երեւանի Սեջ

Անցնող շաբաթավերջին՝ Երեւանի մէջ տեղի ունեցաւ երկօրեայ միջազգային գիտաժողով մը, որ կազմակերպուած էր «Հայաստանը» որպէս քաղաքակրթական խաչմերուկ, պատմամշակութային առընչութիւններ» խորագրով:

Արմէնէֆրէսի հաղորդումներով Հայաստանի Գիտութիւններու ազգային ակադեմիայէն ներս տեղի ունեցած գիտաժողովը՝ «Գեղարդ» նորաստեղծ գիտաՎերլուծական հիմնադրամի, «Օրբելի» կեդրոնի եւ Երեւանի պետական համալսա-

րանի համատեղ ջանքերով էր: Սոյն գիտաժողովը համախմբած էր աշխարհի զանազան երկիրներէն տարբեր պատուիրակներ, որոնց շարքին կը գտնուէին փորձագէտներ, պատմաբաններ եւ գիտական այլ ճիւղերու մասնագէտներ: Գիտաժողովի բացումին ողջօրնի խօսքերով հանդէս եկան ակադեմիայի նախագահ ակադեմիկոս Աշոտ Սադեան եւ Երեւանի պետական համալսարանի վերատեսուչ Յովհաննէս Յովհաննիսեան: «Ժամանակ»

քականին ձգտող եւ հաւաքականը անհատականին գերադասող մարդը:

Մեծարանքի այս շքեղ առիթով, ինծի համար հոգեկան կազդուրի դիպուկ առիթ մըն է իմ յարգանքի տուրքը ընծայելու այս վաստակաւոր երախտաւորին, իմ յարգարժան հայրենակիցիս եւ երեց

գրչեղբօրս՝ Փանոս Թիթիզեանին: Պատիւս արժանաւորաց: Սիրելի՛ Փանոս, յանուն Հայ Աւետարանական Համաշխարհային Խորհուրդի եւ իմ կողմէ, ընդունէ մեր սրտագին շնորհաւորութիւնները: Թող Ամենակալ Աստուած օրհնէ, պահէ ու պահպանէ քեզ եւ ընտանիքդ:

The Western Diocese of the Armenian Church of North America

Under the auspices of His Eminence Archbishop Hovnan Derderian, Primate

"Zvartnots" Cultural Committee Invites you to

Title: What Follows Recognition? Possibilities of an Armenian Restitution Movement

Presented by: Dr. Taner Akçam

Date/Time: Wednesday, April 10, 2024, 7:00 p.m.

Location: Western Diocese of the Armenian Church 3325 N. Glenoaks Blvd., Burbank, CA 91504

Free Admission Coffee & Refreshments

AGBU ARMENIAN GENERAL BENEVOLENT UNION WESTERN REGION

Book Presentation & Signing Ceremony

"Return to Homelessness" by Dr. Vartan Tachdjian

Under the auspices of His Eminence Archbishop Hovnan Derderian Primate of the Western Diocese of the Armenian Apostolic Church of North America & the patronage of AGBU Western Region

The Book will be presented by Dr. Boghos Yerevanian

On Sunday, April 14, 2024 - at 5:00pm

At the Agajanian Auditorium, AGBU Manoogian-Demirdjian School 6844 Oakdale Ave., Canoga Park

Refreshments to follow - Free admission

ԱՆԿՐԿՆԵԼԻ, ՔԱՆՔԱՐԱՎԱՌ ՎԱՀԱՆ ԹԵՔԵԱՆՐ

ՅԱԿՈԲ ՏԻՒՆՆԱՅԵԱՆ

4 Ապրիլ 2024: Մահուն 79-ամեակը արեւմտահայ քերթողութեան գագաթներէն՝ Վահան Թէքեանի:

Մեր մտածումները պահ մը 79 տարի ետ կը դառնան հոն՝ Գահիրէ, ուր 67 տարեկանին իր մահականացուն կնքած Հայ Բանաստեղծութեան իշխանը, տեղի Հայոց գերեզմանատան մէջ կ'ամփոփուէր անոր մարմինը, մօտիկը իր գրչի ու Գաղափարի եղերաբախտ ընկերներուն, մտերիմներուն՝ Արփիար Արփիարեանի, Երուսնդ Օտեանի, Միհրան Տամատեանի, Ալեքսանտր Սարուխանի եւ ուրիշներու:

Բ. Աշխարհամարտի հոնդիւններու հանգումէն քանի մը շաբաթ առաջ, բազմատառապ բանաստեղծը իր «մէկ հատիկ» ալ կը փակէր այս աշխարհի մէջ, իր կեանքի վերջին օրերուն մերժելով հոգածութիւնը իր Գաղափարի իսկ ընկերներուն, մտերիմներուն, տառապելով թոքատապէ՛ գրեթէ մինակութեան մէջ: Այն Գաղափարի, որուն հոգեւին փարեւուն համար, իր գրիչով ու կեանքը գոհաբերելու իսկ գնով յանուն այդ Գաղափարի պաշտպանութեան նուիրուելուն ու պայքարելուն համար, 1916-ի 7 Սեպտեմբերին կորսնցուցած էր լոյսը իր աջ աչքին՝ լրագրական բանավէճերու պատճառով իր Գաղափարի հակառակորդներուն կողմէ իր վրայ կատարուած յարձակման պահուն: Եւ սակայն, յետմահու ան կ'արժանանար ընդարձակ փառքի՝ իր Գաղափարի նոր սերունդի ընկերներուն՝ Փրոֆ. Բարունակ Թովմասեանի, Մեթր շրջանայ Սեղանեանի, Գերսամ Ահարոնեանի, Հայկաչէն Ուզունեանի, Յակոբ Դաւիթեանի ճիգերով, որոնք Պէյրութի մէջ 1947-ին հիմը դրին Թէքեանի Մշակութային Միութեան, որ աշխարհի զանազան երկիրներու մէջ տակաւ առ տակաւ ունեցաւ իր մասնաճիւղերը, որոնք մինչեւ այսօր կը շարունակեն տանիլ գրական-մշակութային երախտաշատ գործունէութիւններ:

Վաւերական, իրապաշտ, գերիրապաշտ, գեղազէտ այն բանաստեղծներէն է Վահան Թէքեանի (Դանիէլ վարուժանի եւ Միսաք Մեծարենցի հետ կազմելով երրորդութիւնը), որուն իմաստասիրական, խոհափիլիսոփայական քերթողութիւնը, Երկիրն ու Երկիրները, Երկիր մարդն ու Երկիրքի Աստուածը մերձեցող իրարու՝ արուեստի վերթերուց արարունները ընդմէջէն տիեզերական գրոյցներու հասնող, բանաստեղծութեան հզօր հուրը հասցնելով լայնահուն ընդգրկումներով գեղարուեստական խորիմաստ, մտածական-գազապան այնպիսի սարսուգին վայելքներու, որ կեանքի պայքարին ու մահուն անդհանքին դիմաց շուարուն կանգնած մարդուն կը շնորհէին այն սիւնիւն սպեղանին, որ հնչեակի մը եւ այլ քերթուածներու մէջ ան ստեղծագործեց հրաշալիքներ, իր քանքարավառ բանաստեղծի հուրհրան տաղանդով, այդ բոլորը յանձնելով իբրեւ հաշուեյարդար, մեկնելով այս աշխարհէն՝ իր վիթխարի գործին հանդէպ ոմանց ուրացումի ու անտեսումի սուրինը սիրտին սակայն, այլեւ դժբախտ ու յետին ծայր ժուժկալ ապրելու գոհունակութեան գողգոթան երկար տարիներ իր մէջ



կրելն...:

Ազնուական, խոնարհ, մարդկայնական հոգիէ մը պայթած բանաստեղծութիւններու, ճշմարիտ ու անմեռ բանաստեղծութիւններու փաստը Թէքեանի փորագրեց սիրտին մէջ իրատես մարդուն՝ դարերու ամբուրքներու դէմ անմարելի վկայարան մ'իբրեւ: Յիրաւի, բանաստեղծութիւններ՝ արուեստի աստուածութիւնը պատգամող, երգող, իրենց հիննալը հեզնող ու արհամարհող, ամէնուրեք ներկայ, որոնք երբեք չեն վախնար ժամանակի հարթիչ-սրբիչէն, քսու ու քոսոտ շողմներէ, բանաստեղծութիւններէ, յայրատ բանդագուշանքներէ: Բանաստեղծութիւններ, որ անդուլ պիտի վառին ու վառեն միտքն ու հոգին, համամարդկային գօրութեամբ մ'աննուած՝ մարդկային սիրտին անուրջները գողտր, ուր երբեք պիտի չսպառին Հայրենիքին Երազն ու Յոյսը, արցունքն ու յոյզերը, Սէրն ու արուեստի քուրան գեղեցկութեան, այնքան ատեն որ կա՛յ Աստուծոյ ստեղծած արդարադատ ՄԱՐԴԸ, կա՛ն արեան ձայները մարդկայնական, որոնք անհունաստեղծ բարիքներն են գլխադիր ու Աստուածառաք այն ՄԱՐԴՈՒՆ, որ նո՛յնինքն Վահան Թէքեանի հանձարեղ բանաստեղծն է:

Իրա՛ւ բանաստեղծութիւնը՝ որ ոսկեցուցու կը ճառագի ընդհանրապէս Արուեստագէտ սերունդի գրողներու գործերուն եւ Վահան Թէքեանի Հայ Բանաստեղծութեան իշխան մեծ բանաստեղծին մէջ մասնաւորապէս, քովէ-քով բերուած ածականներու, արուեստակեալ յոյզերու, այնպիսի բառակազմակցութիւններու հանդիսանք մը չէ հարկաւ՝ ելլելու շալակը մարդոց ու բարձրակարկառ գոռալու գանգուածներուն՝ ծափահարութիւններ խլելու նպատակով, այլ՝ Արարատի ու Մասիսի կատարները բարձրացած եւ հայրենանուէր հայ քաղաքացի մարդուն համար ուղեցոյց-աւետարան, իր բանաստեղծի սիրտին քնարովը քանքարուած ովկիան, հոսելու անդաստանները իր տառապեալ ժողովուրդի յոյզերուն, վիշտերուն, հուսկ հանգչելու գագաթին Հայուն կենսական Հպարտութեան, որուն ակէն ան յորդեցուց «Հրաշալի Յարութիւն»ը, «Կէս Գիշերէն Մինչեւ Արշալոյս»ը, «Սէր»ը, «Հայերգութիւն»ը եւ միւս բոլոր երկերը՝ կայակներով քանքարավառ՝ որ Վահան Թէքեանի մեծ բանաստեղծինն եղան ապաբէն:

Անխառն իրականութիւնն այն է, որ Վահան Թէքեանի ա՛յնքան խոր ու անապական սէրով է ճար-

տարապետած իր բոլոր երկերը, Սփիւռքի տառապանքն ու արեւմտահայութեան դատը ա՛յնքան անպարագիծ տարածականութեան մը վրայ է երգած՝ իր «Հոգեք»էն մինչեւ «Տաղարան», գանակ-գանակ, կերոն առ կերոն բաշխած ապագայ սերունդներուն, որ իր մահէն ետք յետագայ քերթողներուն, սփիւռքահայ գրողներուն անկտակեց իր տաղանդին անմերձենալի մեծութիւնը, անկրկնելի իմացականութիւնը, թող ներուի ըսել կտակեց՝ Վահան Թէքեանի կրկնել կամ բուրել փորձողներուն անպարծութիւնը: Արդարեւ, վարուժաններու, Միամանթօներու, Զօհրայներու, Ռուբին Սեւակներու եւ միւսներուն մարտիրոսացումէն ետք, Հայոց Յեղասպանութենէն հրաշքով փրկուած Վահան Թէքեանի վերջին սակաւ մոտիկաններէն մին արեւմտահայ անճիտուած սերունդին, իր վերոյիշեալ երկերով ըսաւ ու գրեց ամէն ինչ եւ հասաւ Սփիւռքի բազմատառապ թեւերով թեզանուած այսօրուան գոյութեան, ի՛ր իսկ մարգարէական կանխատեսումով՝ արեւմտահայերէնի տակաւ անշքացման՝ ի դէմ ցաբուցրիւ հայ գաղթաշխարհի սաստիկ հողմերուն...:



Փիլիսոփայ բանաստեղծ Վահան Թէքեանի, ունի քիչերուն ծանօթ բանաստեղծութիւն մը՝ «Գիւտեր» խորագիրով, գրուած 1926-ին եւ տպուած «Հայաստանի Կոչնակ»ին մէջ 1937-ին: Սոյն բանաստեղծութիւնը դուրս է մնացած բանաստեղծին մեզի ծանօթ հատորներէն: Վեց տուննոց այս քերթուածին մէջ բանաստեղծը կը գրէ մարդկային միտքին եւ հոգիին միջեւ մեծ տարբերութեան մասին. կու տամ երկու տուն միայն.՝

Այս քառասուն տարուան մէջ քանի՞ Գիւտեր եմ տեսած...

Չըրաշալի, դիւթակա՛ն՝ ժայթքած մարդու ուղեղէն...

Դեռ դեկ չու՛նէր Օղանա՛ւն՝ Օղապարիկ այն ատեն.

Հիմա ու՛նի, կը թըռի... սակայն «պարիկ»ն ո՛ւր մնաց:

Բայց թէ մարդիկ միմեանց դէմ, ազգեր հանդէպ իրարու, Աւելի գէշ են գայլէն, հեղձուցիչ

կազ են ու թոյ՛ն՝ Պատճառը այն է հարկաւ՝ որ այս Գիւտերն իր հոգւոյն Շընու՛նդը չեն, այլ՝ միայն իր ուղեղի՛ն ահարկու...

Որքան իրաւացի, գիտնական մարդ է Թէքեան: 98 տարի առաջ ան գրած, հիմա աշխարհը թունաւորող, քանդող, մեզ քորոնաներու դար մտցուցած այսօրուան ռազմատենչ ախոյեաններուն համար գրած ըլլար ան կարծես, որոնց «Գիւտեր»ը ծնունդն են իրենց հրէշային, գայլի մտածողութեան: Ուրեմն, մարդկայնական հոգին չի՛ կրնար գէշի ծնունդը ըլլալ: Մարդկայնական հոգին՝ ծնունդը երկնային Աստուծոյ ու երկրային մօր, պէ՛տք է ունենայ մարդկութիւնը սիրող եւ համամարդկայնորէն բաբախող սիրտ, որ ունէ՛ր Վահան Թէքեանի եւ իր այդ սիրտով ան նուիրաբերեց իր կեանքը հայ գրականութեան բազմափունս, ի սէր ժողովուրդներու միջեւ բարեկամութեան եւ ի խնդիր Արդարութեան երազին՝ որուն ան չհասա՛ւ, անոր... «Իդէո՛վը մեռաւ...»:

Հայերգակ, քնարերգակ, մարդերգակ Մեծն Թէքեանի «Աղօթք՝ Վաղուան Սեմին Առջեւ» ութ տուննոց բանաստեղծութիւնը կը մնայ համամարդկային չափանիշով իր բազմաթիւ ստեղծագործութիւններուն մէջ առանձին գագաթ մը. ան այսպէս կը դիմէ Ամենակարողին.՝
Կեանքին համար բովանդակ կաթեցուր սեր սրտի՛ն մէջ
Չօրաւորին այսօրուան, գորաւորի՛ն ալ վաղուան...
Սրտերն անոնց չըխըցուի՛ն՝ այլ պարպւի՛ն ու լեճա՛ն
Իրարո՛ւ մէջ, իրարմո՛վ՝ հաղորդութեամբ մը անվերջ...:

Գրթա՛ գո՛նէ տըղայոց եւ ծերերուն. մի՛ թողուր
Տըղաքն առանց գորովի, ծերերն առանց ցեցուկի...

Թո՛ղ ընդհարումն ըլլայ կարճ եւ թո՛ղ շուտով հաստատուի
Խաղաղութիւնը արդար՝ կռուողներուն մէջ տըխուր...

Թո՛ղ սասանին ու փշրին բարձր բերդերն անառիկ
Եւ իյնան վար պատմչներն զբրահապատ ետութեանց.
Ամեն մարդու հաւասար թող բաժնրի ամէն գանձ.
Թո՛ղ պարտեգները բացուին եւ թող խուժե՛ն հոն մարդիկ,

Բայց չըկոտորե՛ն ոչ մէկ ծառ, չըճզմե՛ն ո՛չ մէկ ծաղիկ...:

Վահան Թէքեանի մասին այս միտքերը պիտի չուզուին ավարտիլ այս քանով: Իր ողջ ախո՛ս ու անմահ ստեղծագործութիւնները ամէնօրեայ ուղեկիցն են Հայ մարդուն, օտարին ալ, ի՛նչ գոյնի կամ ցեղի ալ պատկանի ան:

Իր մահուն տարելիցին, իր անմեռ յիշատակն ու գործերը, անցած կեանքին չարչարազին ուղին, կրկին կը յուզեն մեր հոգիները... լալու չափ...
Յաւերթ լոյս ու խաղաղութիւն իր բազմատառապ հոգիին: «Աղթամար»

Ձեր Ծանուցումները Վստահեցեք
«Մասիս» Շաբաթաթերթին
Massis2@earthlink.net (626) 797-7680

Հնդիկ Պատանիին «Գողցուած» Կեանքը

ԴՈՎՏ. ԳՐԱՅՐ ԸՆԴԵՆՆԱՆ

«Գողցուած ուրիշ բանի համար չի գար, այլ միայն գողնալու եւ սպանելու ու կորսնցնելու համար: Ես եկայ որ կեանք ունենան եւ ալ աւելի կեանք»:

(Աւետարան Ըստ Յովհաննու 10:10)

Փետրուար 2024 ՝ Ճայթուր, Հնդկաստան:

Ճայթուր կը գտնուի Հնդկաստանի Ռաճըսթան նահանգին մէջ: Այդ նստավայրն էր թագաւորական ընտանիքին, որոնք իշխեցին այս շրջանը եւ 1727 թուականին հիմնեցին այս «մանիշակագոյն» քաղաքը: Այս քաղաքին ճարտարապետութիւնը կ'զգլտէ ու կ'անցնի արուեստի բոլոր ճաշակները եւ հմտութիւնները եւ մինչեւ օրս կը հմայէ աշխարհի տարբեր երկիրներէն այցելուները եւ զբոսաշրջիկները:

Կեցած եմ ճարտարապետական մէկ կոթողին առջեւ, որպէսզի ունենամ յիշատակի նկար մը: Երբ կը պատրաստուէի նկարուելու, ինծի մօտեցաւ պատանի աղջիկ մը՝ երեւի հագիւ տաս տարեկան: Ան այն պզտիկներէն է որ կ'ապրի փողոցներու մէկ անկիւնը՝ այսպէս ըսուած աղբակոյտերու մէջ: Նայեցայ անոր դէմքին ու մագերուն, որոնք կ'արտայայտէին իր ապրած շրջանի վիճակը: Ու տակաւին ինչ խօսք անոր հագուստները: Կօշիկ չունէր եւ չեմ ալ գիտէր եթէ գիտէ անոր իմաստը եւ կարեւորութիւնը երբ իր ոտքի մատները հաւասարած են ու կնճրոտած՝ երբ անընդատ կը քալէ բոպիկ:

Հնդիկ պատանին ունէր անմեղ աչքեր ու երեսին վրայ տակաւին յստակ է մանկութեան բարի արտայայտութիւնները: Ձեռքը ունէր քանի մը վարդեր որ պիտի փորձէ ծախել որպէսզի վաստիկ քանի մը ուրբբի: Ան նայեցաւ ինծի առանց որեւէ մէկ արտայայտութեան: Ամէկոտութիւն չիկար հոն եւ տեսայ իր մանկական աչքերուն մէջ տակաւին ամուր կեցած արժանապատուութիւն մը: Արժանապատուութիւնը կեանքին: Ան իր այս վիճակին մէջ՝ եթէ հետո չէր խօսէր, բայց ակներեւ էր իր մէջ կեանքի նկատմամբ կուտակուած իր թախիծը եւ ցաւը: Մանկութիւնը չապրող այս հնդիկ պատանին որ կեանքը կ'ուզէր: Ան կեանքը որ իրմէ գողցուած է:

Շարունակեցի դիտել այս անմեղ հնդիկ մանուկ-պատանին: Բայց չէ՞ որ ինք այլ իրաւունք ունի ապրելու յար եւ նման շատ մը ուրիշ իրեն տարեկից պզտիկներուն: Չէ՞ որ արժանապատիւ կեանք մը ունենալը եւ անոր ցանկալը իր ալ իրաւունքն է: Երեւի մտորումներս իտեայական են: Իրական կեանքը բոլորովին ուրիշ կարգավիճակի մէջ է: Աշխարհ այսօր կ'ապրի անիրաւութիւններու, զրկանքներու, անարդարութիւններու, պատերազմներու ու տակաւին ցեղասպանութիւններու հոլովոյթները, ուր մարդկային արժէքները եւ անոնց հետ կեանքերը կը ռոնակոխուին ու կը բռնաբարուին: Աշխարհ այս բոլորին ակնատես ըլլալով երեւի միայն դիտորդի վիճակ մը ունի՝ առանց բան մը ընելու կամ կարենալ ընելու: Մարդուն կեանքը, արժանապատուութիւնը՝ իր ամբողջական հասկացողութեան մէջ էն, կը գողցուի եւ համաշխարհային համակարգեր անկարող են ետ վերադարձնել այն որ կը գողցուի:

Ճայթուրի մէջ այդ օր կեցած էի այս անմեղ մանուկ-պատանին քով որ կը փորձէր իր գողցուած կեանքին բարուք լուծում մը գտնէր: Իսկ բարուք լուծումը:


Քրիստոնէական աստուածաբանութիւնը կուզայ ոչ միայն հակադրուելու գողին, գողցողին ու գողցուածին դէմ, այլ նաեւ փոխարինելու այդ բոլորը եւ նորը տալով՝ Քրիստոս Յիսուսի միջոցաւ, եւ որ կը բացատրուի աւելի կեանքի իրականութեան մէջէն. «Ես եկայ որ կեանք ունենան եւ ալ աւելի կեանք» (Յովհաննու 10:10): Քրիստոսի աշխարհ գալը աննպատակ ու անձնական հաշիւներու համար չեղաւ: Ան եկաւ որպէսզի տայ եւ ոչ թէ առնէ:

Իսկ Քրիստոսի տալը: Քրիստոս տուաւ իր կեանքը՝ երբ խաչուեցաւ ու մահացաւ, եւ իր յարութեամբ ան հակադրուեցաւ գողին՝ իմա մեղքին դէմ, յաղթեց անոր եւ մարդկութեան տուաւ նոր եւ աւելի կեանք:

«Աւելի» բառին յունարէն արմատը կը բացատրուի որպէս «բերիսոն», որ կը նշանակէ եւ կը բացատրուի որպէս բարեբեր, անհաշուելի, անսակարկելի բայց նաեւ իրականութիւն մը որ քանակական տուեալներով կարելի չէ պատկերացնել: Այս «աւելի» կեանքը լեցուն է եւ ամբողջական, որ կուտայ եւ կը շնորհէ ուրախութիւն, երբ նոյնիսկ տխրութիւն կայ չորս դին: Այս «աւելի» կեանքի հիմքը զօրութիւնն է, որ կը լիցքաւորէ մարդկային կեանքը կազմող հոգին ու մարմինը եւ որ հեռու կը պահէ երկչոտութենէ, որուն միջոցաւ անհատը կը դիմազրակէ կեանքի բոլոր պատուհասները:

«Աւելի» կեանքը չի խօսիր քանակական տուեալներու մասին ոչ ալ առողջութիւն պարգեւելու, կամ յաջողութեան հասնելու ու տակաւին դիրքի ու պատիւի: «Աւելի» կեանքը կը խորհրդանշէ Աստուծոյ պատգամին եւ անոր իմացութեան գիտակցութիւնը որ բանալին եւ հիմքն է «աւելի» կեանքին: Այս պատգամը եւ անոր իմացութիւնն է որ կը տանի մեզի ամբողջական կեանքի այս հասկացողութեան: «Աւելի» կեանքը, որ ամբողջական սահմանում ունի, կը կեդրոնանայ հոգեւոր արժէքի գիտակցութեան վրայ, որ կը սկսի աշխարհին մէջ ու կը տանի յաւիտենական կեանքի իրականութեան: Այս բոլորը իրական կը դարձնան երբ մարդը կրնայ ստեղծել Աստուծոյ հետ իր անձնական յարաբերութիւնը: Այս յարաբերութիւն-կեանքին մէջէն է որ քրիստոնէան կը մեծնայ ու կը զարգանայ. «Հապա աճեցէք մեր Տէր ու Փրկիչ Յիսուս Քրիստոսի շնորհքով ու գիտակցութիւնովը» (Բ. Թուղթ Պետրոսի 3:18):

«Աւելի» կեանքը կը փոխէ մարդկային կեանքի նկատմամբ մեր հայեցակէտերը եւ դիտարկումները: «Աւելի» ունի կարողականութիւններ փոխելու եւ ստեղծելու այն որ գեղեցիկ է, զօրաւոր, արդար եւ որ անընդհատ կը ստեղծագործէ ու կը տգնի՝ նորը շինելու համար: «Աւելի» կեանքը կուտայ ուժը դէմ դնելու մահուան՝ իմա չարին ու մեղքին, անարդարութեան եւ անիրաւութեան: Դէմ դնելու գողին ու գողութեան: Նորը շինելով՝ հոս աշխարհին մէջ, որ կը շարունակուի յաւիտենականութեան հասկացողութեան համար:



Հնդիկ մանուկը կ'ուզէ ստանալ իրմէ գողցուած կեանքը:

Աշխարհ այսօր եթէ տապալակ մէջ է, քանի իր արժէքի կեանքը ու անոր հասկացողութիւնը գողցուած, սպաննուած եւ կորսուած է: Եթէ աշխարհ կ'ուզէ վերագտնել իր արժէքը, կայ Յարութեան իրականութեան շնորհած նոր կեանքը: Այն կեանքը, որ ինծի, քեզի եւ մեր բոլորին պիտի տայ «աւելին»: Այն «աւելին» որ պիտի շինէ մեր նոր կեանքերը:

Հնդիկ մանուկը կ'ուզէ ստանալ իր գողցուած կեանքը: Աշխարհ կ'ուզէ վերատիրանալ

իր արժէքի կեանքը, որ այսօր գողցուած է:

Եթէ պիտի արժեւորենք Քրիստոսի Յարութիւնը այսօր, այդ պիտի նշանակէ թէ պիտի իւրացնենք եւ կառչինք «աւելի» կեանքին: «Աւելի» կեանքը որ նորը պիտի շինէ:

Աշխարհ այսօր պէտք ունի այս ՆՈՐԻՆ:

Այս «աւելի» կեանքին ձգտելու եւ անոր միջոցաւ ՆՈՐԸ շինելու միտումով՝ Քրիստոս Յարեաւ ի մեռելոց:

Օրհնեալ է Յարութիւնը Քրիստոսի:

ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State:----- Zip Code:-----

Country: -----

Tel:-----

Email: -----

«Լիվերփուլ» Դարձաւ Առաջատար



Անգլիոյ առաջնութեան 30-րդ հանգրուանին «Լիվերփուլ» իր դաշտին վրայ մրցեցաւ «Պրայֆոնի» հետ: Գերմանացի ետերկեն Կլոպի գլխավորած խումբը յաղթանակի հասաւ 2:1 արդիւնքով:

Երկրորդ վայրկեանին հանդիպման հաշիւը բացաւ «Պրայֆոնի» անգլիացի յարձակող Տենի Ուելչեկը:

«Լիվերփուլ» կողմը նշանակեցին քոլումպիացի յարձակող Լուիս Տրազն ու եգիպտացի յարձակող Մոհամէտ Սալահը:

«Լիվերփուլ» (29 խաղ) 67 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը:

«Մանչեսթըր Սիթի» Ու «Արսենալ» Կոլ ՉՆշանակեցին

Անգլիոյ Փրեմիեր Լիգայի առաջնութեան 30-րդ հանգրուանին ախոյեան «Մանչեսթըր Սիթի» ընդունեց փոխախոյեան «Արսենալին»: Խաղը աւարտեցաւ առանց կոլերու:

29 խաղէն յետոյ «Արսենալ» 65 կէտով երկրորդն է, «Մանչեսթըր Սիթին» երրորդն է՝ 64 կէտ:

«Ռեալ» Ուժեղ Էր «Աթլետիկո»

Սպանիոյ առաջնութեան 30-րդ հանգրուանին Մատրիտի «Ռեալը» ընդունեց Պրիպատոյի «Աթլետիկո» եւ առաւելութեան հասաւ յաղթեց 2:0 արդիւնքով:

Տուպիլի հեղինակ դարձաւ պրագիլցի յարձակող Ռոտրիկոն, որ երկու կոլ նշանակեց 8-րդ եւ 73-րդ վայրկեաններուն:

«Ռեալ» 75 կէտով կը գլխավորէ մրցաշարային աղիւսակը եւ 8 կէտ առաջ է երկրորդ տեղը գտնուող ախոյեան «Պարսելոնայէն»: «Աթլետիկո» չորրորդն է՝ 56 կէտ:

«Պարսելոնային» Յաղթանակ Բերաւ Ռաֆինիայի Կոլը

Սպանիոյ առաջնութեան 30-րդ հանգրուանին ախոյեան «Պարսելոնան» ընդունեց «Լաս Փալմասին»: Սպանացի Չաւիի գլխավորած խումբը յաղթեց 1:0 արդիւնքով:

Միակ կոլը 59-րդ վայրկեանին նշանակեց պրագիլցի յարձակող Ռաֆինիան, որուն կողային փոխանցում կատարեց փորձուկալացի յարձակող Ժոսուէ Ֆելիշը:

«Պարսելոնան» 67 կէտով երկրորդն է եւ առաջատար «Ռեալի» ետ է 5 կէտ: Արքայական խումբը մէկ խաղ պակաս խաղցած է:

«Պայըրն» Պարտուեցաւ «Պորուսիայէն» Եւ 13 Կէտ Ետ Է Առաջատար «Լիվըքուսընէն»



Գերմանիոյ առաջնութեան 27-րդ հանգրուանին ախոյեան «Պայըրն» Միլնիլի մէջ մրցեցաւ Տորթմունտի «Պորուսիայի» հետ եւ պարտութիւն կրեց 0:2 արդիւնքով:

«Պայըրն» 60 կէտով երկրորդն է եւ 13 կէտ ետ է առաջատար «Լիվըքուսընէն»: «Պորուսիան» չորրորդն է՝ 53 կէտ:

«Ինթեր»-ը Սեփական Յարկին Տակ Յաղթած Է «Էմփոլի»-ին

Իտալիոյ ֆութպոլի ախոյեանութեան 30-րդ հանգրուանի ծիրին մէջ «Ինթեր»-ը սեփական յարկին տակ հիւրընկալած էր «Էմփոլի»-ին:

Միլանեան ակումբը յաջողեցաւ առաւելութեան հասնիլ «Էմփոլի»-ի նկատմամբ երկու կոլի առաւելութեամբ:

Հայաստանի ֆութպոլի ազգային հաւաքականի նախկին խմբապետ Հենրիխ Միխիթարեանը «Ինթեր»-ի մեկնարկային կազմին մէջ էր, սակայն փոխարինուեցաւ 85-րդ վայրկեանին:


Այս յաղթանակէն յետոյ ալ «Ինթեր»-ը կը շարունակէ մնալ Սերի Ա-ի մրցաշարային աղիւսակին առաջատարը: Խումբը ունի 79 միաւոր: Երկրորդ տեղը գտնուող «Միլան»-ը հաւաքած է 65 միաւոր:

Մեսին Չորրորդ Անգամ Ըլլալով Չմասնակցեցաւ «Ինթեր Մայամիի» Խաղին

Աշխարհի ախոյեան Արժանթինցի հաւաքականի 36-ամեայ յարձակող Լիոնել Մեսին չկարողացաւ մասնակցիլ ՄԼՍ-ի յաջորդական չորրորդ խաղին: «Ինթեր Մայամիին» առանց Մեսիի 1:1 արդիւնքով հաւասարեցաւ «Նիւ Եորք Սիթիի» հետ:

Մեսի վիրաւորուած ըլլալով չկարողացաւ մասնակցիլ նաեւ Արժանթինի հաւաքականի երկու ընկերական հանդիպումներուն:

«Ինթեր Մայամիի» մարզչները յոյս ունի, որ Լիոնել Մեսին կը կարողանայ մասնակցիլ մեքսիքական «Մոնթերէյի» դէմ հանդիպումին CONCACAF-ի Ախոյեաններու լիկայի քառորդ եզրափակիչին:



Նեյմարը Կը Փորձէ Վերադառնալ «Պարսելոնա»

Սէուտական Արաբիոյ «Ալ Զիլիալի» եւ Պրագիլի հաւաքականի յարձակող Նեյմարը կը փորձէ վերադառնալ «Պարսելոնա», որու խումբէն խաղացած է 2013-2017 թուականներուն:

32-ամեայ ֆութպոլիստը «Ալ Զիլիալի» ղեկավարութենէն խնդրած է մէկ տարուայ վարձակալութեան պայմանագրով հնարաւորութիւն տալ իրեն յաջորդ մրցաշրջանին հանդէս գալ «Պարսելոնայէն», կը հաղորդէ Sport.es-ը:




Այժմ Նեյմարը կը վերականգնուի ծունկի վնասուածքէ: Անոր վերադարձը խաղադաշտ կը սպասուի Օգոստոսին:

Կուարտիլա Կը Դժգոհի. Մենք 3 Օրը Մէկ Խաղ Ունինք, Իսկ «Ռեալը» 9 Օր Կը Պատրաստուի

Անգլիոյ ախոյեան, գաւաթակիր, Ախոյեաններու Լիկայի գաւաթակիր, Եւրոպայի Սուփերգաւաթակիր, աշխարհի ակումբային ախոյեան «Մանչեսթըր Սիթի» քաթալոնացի գլխավոր մարզիչ Խոսեպ Կուարտիլան հերթական անգամ դժգոհած է յազեցած օրացոյցէն:

«Մենք երեք օրը մէկ հանդիպում ունինք մինչեւ «Ռեալի» դէմ խաղը, իսկ անոնք 9 օր կը հանգստանան: «Ասթոն Վիլայի» հետ պիտի խաղանք Չորեքշաբթի, իսկ յաջորդ հանդիպումը կը կատարենք Շաբաթ օրը: Յաջորդ երեքշաբթի ալ կը մեկնինք Մատրիտ:



«Ռեալը» մեր դէմ խաղին պատրաստուելու համար կ'ունենայ 9 օր: Իսկ ես մէկ օր աւելի կը խնդրեմ հանգստի համար, բայց անյոյս է: Այս պատճառով կը խնդրեմ փոփոխութիւններ օրացոյցի մէջ: Ես կարծիք կը յայտնեմ, բայց կրնաք մոռնալ: ՈւեֆԱ-ն իր գործերը ունի, ՖիֆԱ-ն՝ իր գործերը, հեռարձակողները եւս շատ գործ ունին», - Կուարտիլայի խօսքը կը մէջբերէ BBC-ն:

Ախոյեաններու Լիկայի քառորդ եզրափակիչի «Ռեալ» - «Մանչեսթըր Սիթի» առաջին հանդիպումը տեղի կ'ունենայ Ապրիլի 9-ին:



Massis Publishing Presents
the US Premiere of

RED

*“Where there is no justice,
every loyalty is false.”*

English Subtitled, Documentary Film
Produced and Directed by

KADIR AKIN

*Based on the book “Armenian Revolutionary
Paramaz-Armenian Socialists and Genocide from
Abdulhamid to Ittihat Terakki” written by Kadir Akin*

Q&A Following Screening with
film producer and director Kadir Akin and

Special Guest

GARO PAYLAN

Former Deputy Turkish Parliament

THURSDAY APRIL 18, 2024

starting 8:00pm

AGBU VATCHE & TAMAR MANOUKIAN CULTURAL CENTER
2495 E Mountain St, Pasadena, CA 91104

Free Admission, Reservation Required

info@massispost.com

Project Advisor

ALEX KEUSHKERIAN

Cameramen

IMRE AZEM
ONUR ZEYBEK

Montage

IMRE AZEM

Sound Mixing

STUDIO ISTANBUL

